



**Ն. Ս. Օ. Տ. Տ.
Գարեգին Բ Ամենայն
Հայոց Կաթողիկոսի
շնորհավորական
ուղերձը Գիտելիքի
օրվա առիթով**

Գիտելիքի օրվա եւ 2015-2016 ուսումնական տարվա բացման առիթով Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում կրթության ասպարեզի նվիրյալ սպասավորներին, մեր սիրելի ուսանողներին եւ աշակերտներին:

Մեր ժողովուրդն առանձնապես հատուկ սեր ու ձգտում ունի դեպի կրթությունը եւ մեծ պատկանակությունը ու խոնարհում է տաժում ուսուցչի եւ մանկավարժի հանդեպ, ովքեր անմնացորդ նվիրումով ծառայում են սերունդների կրթության եւ դաստիարակության վեճ գործին: Մեր երկրի առաջընթացի ու զարգացման, մեր ժողովրդի բարձր կյանքի հաստատման համար առաջնությունն է մեր հաստատությունները, որ կոչված են ապահովելու արդի պահանջները բավարարող որակյալ կրթություն, սերմանելու հոգեւոր եւ ազգային արժեքներ մեր գավաթից հոգիներում, որոնց ձեռքերում է մեր ապագան: Ամենքիս առաքելությունն է կերտել ազնիվ, հայրենասեր ու հավատավոր նկարագիր մեր զավակների, գորացնել նրանց մեջ պատասխանատվությունն ապագայի նկատմամբ եւ ամրապնդել Աստծո կողմից տրված շնորհները բազմապատկելու եւ ի շահ մեր երկրի եւ ժողովրդի գործարքելու հանձնառությունը:

Հայրական սիրով եւ օրհնությամբ մաղթում ենք, որ երկնավոր մեր Տերը բազում հաջողություններով պսակի մեր սաների ուսումնառության ընթացքը եւ շնորհագրողի ու գորակից լինի մեր սիրելի մանկավարժներին եւ կրթության գործի բոլոր մշակներին՝ իրենց նվիրական եւ պատասխանատու կոչման եւ առաքելության մեջ:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի աստվածային ամենաճշատ սերն ու շնորհները միշտ ձեզ հետ լինեն, ամեն:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ**

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց**

ԱՄՆ Արեւելյան հայոց թեմից ժամանած ուխտավորներին

4 սեպտեմբերի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Արեւելյան հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ թեմի հոգեւոր սպասավոր Գարեգին ավագ քահանա Գասպարյանի:

Շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար՝ տեր Գարեգինը ներկայացրեց խմբի անդամների եկեղեցանվեր ծառայությունը, ապա ընդգծեց, որ Մայր Աթոռ ուխտավորների այցը եւ Նորին Սրբության հետ հանդիպումներն առիթ են ընծեռում մոտիկից ծանոթանալու Հայ Եկեղեցու նվիրական արժեքներին եւ ավելի գորանալու իրենց հավատի մեջ:

Այնուհետեւ ուխտավորներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Գարեգին ավագ քահանա Գասպարյանի բազմամյա նվիրյալ ծառայությունն ԱՄՆ Արեւելյան հայոց թեմում, ինչպես նաեւ կարեւորեց ներկա հավատավոր հայրորդիների գործունեությունը ներգրավվածությունը ծխական-համայնքային կյանքում:

Ի պատասխան հարցումների՝ անդրադառնալով Սփյուռքում հայապահպանության խնդիրներին՝ Վեհափառ Հայրապետն ի մասնավորի ընդգծեց, որ Եկեղեցին եւ եկեղեցականները պիտի շարունակեն ամեն ջանք գործադրել պատանի սերունդի քայլերը դեպի Եկեղեցի առաջնորդելու եւ երիտասարդների հոգում ազգային-հոգեւոր նվիրական արժեքների հանդեպ սերն ու հավատարմությունը արթուն պահելու համար:



րունակեն ամեն ջանք գործադրել պատանի սերունդի քայլերը դեպի Եկեղեցի առաջնորդելու եւ երիտասարդների հոգում ազգային-հոգեւոր նվիրական արժեքների հանդեպ սերն ու հավատարմությունը արթուն պահելու համար:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք

վերաբերում էին սիրիահայությանը Եկեղեցու կողմից ցուցաբերվող գորակցությանը, Հայոց ցեղասպանության Նահատակների սրբադասմանն ու հայոց պահանջատիրությանը, երիտասարդության քրիստոնեական-ազգային դաստիարակության խնդիրներին եւ Եկեղեցի-պետություն հարաբերություններին:

Թշնամու գնդակից հրազենային վնասվածք ստացած հոգեւորականին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սույն թվականի օգոստոսի 11-ին ԼՂՀ հյուսիսարեւելյան հատվածի գորամասերից մեկի ուղղությամբ հակառակորդի կողմից իրականացված հետախուզադիվերսիոն ներթափանցման փորձի հետեւանցով գլխի հրազենային վնասվածք ստացած ՀՀ ՉՈՒ հոգեւոր սպասավոր Հովհաննես սրկ. Գալստյանին՝ Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի ուղեկցությամբ:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր օրհնությունը փոխանցեց Հովհաննես սրկ. Գալստյանին՝ շուտափույթ ապաքինում մաղթելով նրան:

Վեհափառ Հայրապետը, փառք տալով Երկնավորին, որ Տիրոջ ողորմությամբ կանխվել է Հովհաննես սարկավագի կյանքին սպառնացող վտանգը, շեշտեց, որ Հայ Եկեղեցու ամեն մի հավատացյալ եւ հոգեւորական հպարտ է Հովհաննես սարկավագի դրսեւորած արի ոգով ու խիզախ պահվածքով:

Գնահատանքով անդրադառնալով Հայոց բանակում հայ հոգեւորականների առաքելությանը՝ Նորին Սրբությունը նշեց, որ մեծ մխիթարություն է տեսնել, թե ինչպես են Հայ Եկեղեցու հոգեւորականները, ի դեմս Հովհաննես սարկավագի, իրենց նվիրյալ ու նախանձախնդիր ծառայությունն իրականացնում մեր բանակում՝ սպասավորելով հայ զինվորին, անգամ մարտական դիրքերում մշտապես կանգնած լինելով նրա կողքին եւ նրա հետ հաճախ հայտնվելով կյանքի եւ մահվան սահմանագծում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհումակցությամբ ողջունեց Հովհաննես սարկավագի որոշումը՝ շարունակելու իր ծառայությունը Հայոց բանակին եւ հայրենիքին:

Ներկայումս Հայոց բանակի հոգեւոր առաջնորդության կազմում՝ ՀՀ եւ ԼՂՀ տարբեր գորամասերում, իր ծառայությունն է բերում 52 եկեղեցական:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ

Օգոստոսի 31-ին՝ Նոր ուսումնական տարեշրջանի նախօրեին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ:

Ավանդական դարձած այս արարողությանը ներկա էին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, պետական եւ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներ, Աժ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանը եւ անդամները, կրթական պետական կառույցների ներկայացուցիչներ, տարբեր մարզերից Մայր Աթոռ ժամանած հանրակրթական դպրոցների ու մանկապարտեզների տնօրեններ եւ մանկավարժներ:

Արարողությունն սկսվեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի ողջույնի խոսքով:

Սրբազանը ներկաներին մաղթեց, որ նրանց գիտակցության մեջ միշտ թարմ մնա թարգմանազան ոսկեդարյան շրջանի ս. Սահակ եւ ս. Մեսրոպ Եռանմեծար վարդապետների ոգին. «Նրանք իրենց աշխատանքին ու գործին լծվեցին պատասխանատվության բարձր եւ վեհ գիտակցությամբ. նրանց պատասխանատու էին իրենց հայրերի Աստծու առջեւ, պատասխանատու էին իրենց ժողովրդի առջեւ եւ իրենց Եկեղեցու առջեւ:

Շարունակությունը՝ էջ 2

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ



Սկիզբը՝ էջ 1

Այս պատասխանատվության զգացումն էլ մարդուն ամենքիդ այս՝ 2015-2016 ուսումնական տարեշրջանում: Մարդուն էլ, որ երբեք չբավարարվեց լույս պատասխանատվության զգացումով, այլ այն վերածեց հանձնառության... Երբեք չվախենաք մեր զավակների կրթության ու դաստիարակության գործը

ծեր ուսերին անելու համար»:

Այնուհետև, նախագահությամբ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանի, կատարվեց օրհնության կարգ, որի ավարտին կրթության ոլորտի պատասխանատուներին և մշակներին իր հայրապետական պատգամն ու օրհնությունը քերեց

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Գիտելիքի օրվա եւ նոր՝ 2015-2016 ուսումնական տարվա մեկնարկի առիթով իր օրհնությունը բերելով կրթության ոլորտի ներկայացուցիչներին՝ Նորին Սրբությունը մարդեց, որ հայ ազգի զավակները նրանց խնամքի ու դաստիարակության շնորհիվ աճեն ու հասակ առնեն որպես Հայաստանի արժանավոր քաղաքացիներ եւ Հայոց Եկեղեցու արժանավոր զավակներ, դառնան հայրենիքի հույսը, ժողովրդի բարօր ու պայծառ օրվա կերտողները:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորապես անդրադարձավ արարողության ժամանակ ընթերցված սերմնացանի ավետարանական առակին եւ մանկավարժի կերպարին: «Կրթության դաշտում սերմնացանները կրթության ոլորտի մշակներն են. դուք ձեր աշխատանքով կարող եք մեր զավակների հոգիները վերածել ե՛ւ այրված ժայռերի, ե՛ւ չոր ճանապարհների, ե՛ւ մոլախոտերով, փուշ ու տատակով ծածկված անդատանների: Զեր աշխատանքով դուք նաեւ



կարող եք մեր զավակների հոգիները դարձնել բերրի արտեր, եթե հոգածությամբ ու խնամքով, նախանձախնդրությամբ եւ պատասխանատվության զգացումով իրականացնեք ձեր աշխատանքը...», - նշեց Գարեգին Բ Հայրապետը՝ մարդելով, որ նրանց ներդրած ջանքերը շարունակ արդյունավորվեն,

իսկ վաստակը միշտ արժանավորապես գնահատվի ինչպես ուսանողների, այնպես եւ մեր ժողովրդի բոլոր զավակների կողմից:

Վերջում Նորին Սրբությունը հայցեց, որ Տիրոջ օրհնությունը միշտ ուղեկից լինի ներկաներին եւ առաջնորդի մանկավարժի պատվական ծառայության մեջ:

Սրբապատկերը (իկոնա) զարգացման արդյունքն է և անհրաժեշտ է անցել: Հանրային կյանքում քրիստոնեական հոգեւոր մշակույթի եւ գեղարվեստական մտածողության արգասիք՝ այն զարգացել է պաշտամունքի կանոնի գուցե քիչ քան՝ համապատասխանելով վարդապետական եւ դավանաբանական կարեւորագույն ձեւակերպումներին: Այդ ճանապարհին հստակվել է բյուրեղացել է նաեւ սրբապատկերի խորհուրդը՝ նրա ընկալման կերպը:

Մեր Եկեղեցում սրբապատկերներն առաջին հերթին այն գեղանկարներն են, որոնք զարդարում են սբ Սեդակը, Եկեղեցու դասի, տաճարի եւ գավթի որմեն ու սյուները: Այդ պատկերների առջեւ է, որ մենք սովորաբար մոմ ենք վառում եւ աղոթում: Բոլորս էլ գրեթե ամեն օր տեսնում ենք այդ պատկերները, սակայն մեզինք ջշերն են, որ գիտեն այդ պատկերների իրական նշանակությունն ու կոչվածությունը, իսկ շատերի պատկերացմամբ դրանք լույս քրիստոնեական թեմաներով կատարված նկարներ են, որոնք իրենց ներկայությամբ պարզապես գեղեցկացնում են Եկեղեցու ներքին տարածքը: Սակայն սա մակերեսային գիտելիք է եւ չի արտահայտում սրբապատկերի իրական դերն ու նշանակությունը Եկեղեցու խորհրդական կյանքում: Եվ որպեսզի ճիշտ ընկալվի սրբապատկերի երեւոյթը, համառոտ ներկայացնենք այն հիմնականը, ինչը պետք է գիտենա մեզինք յուրաքանչյուրը՝ Հայ Առաքելական Եկեղեցու ամեն մի զավակ:

Եկեղեցին եւ սրբապատկերը

Սրբապատկերը եւ նրա կիրառությունը Եկեղեցում նույնքան հին են, որքան ինքը՝ Եկեղեցին: Ս. Բարսեղ Կեսարացու (Դ դար) վկայությամբ՝ Հիսուս Զրիստոսի, Աստվածամոր եւ սրբերի պատկերների գոյությունը Եկեղեցում ավանդական է եւ օրհնված առաքյալների կողմից:

Ըստ Եկեղեցու սրբազան ավանդության՝ առաջին սրբապատկերներն են Հիսուսի դաստառակը եւ Աստվածամոր պատկերը: Մեզ համար նշանակալից եւ խորհրդանշական է, որ այս երկու նկարական պատկերները ժամանակին պատկանել են Հայ Եկեղեցուն: Սրբապատկերի հնությունը հաստատվում է նաեւ հնագիտական պեղումների արդյունքներով: Պոմպեյի եւ Յերուսաղեմի պեղումների ժամանակ հայտնաբերվել են սրբապատկերներ: Այդ քաղաքները կործանվել են 79 թվականին, եւ լույս աշխարհ եկած գտածոներն ինքնին ամրագրում են այն փաստը, որ սրբապատկերները կենցաղավարել են Եկեղեցում դեռեւս առաքելական ժամանակներից: Հետագայում Եկեղեցում սրբապատկերի անհրաժեշտությունը, որպես քրիստոնյայի ներքին աղոթական վիճակի եւ նրա բարոյական նկարագրի կատարելագործմանը նպաստող պայման, գիտակցել է հորդորել են առաքյալների գործի անմիջական շարունակողները՝ Ընդհանրա-

Սրբապատկերների մասին (սրբապատկերի մասին)

Սեպտեմբերի 8-ին՝ Ս. Մարիամ Աստվածածնի ծննդյան տոնին՝ ժամը 10:30-ին, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների սրբապատկերը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շարազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռից տեղափոխվեց Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորչի մայր եկեղեցի՝

կան Եկեղեցու սուրբ հայրերը: Նրանք հատուկ վկայում են այն օգուտի մասին, որ տալիս են սրբապատկերները՝ խրատելով, հորդորելով, ուղղելով եւ լուսավորելով քրիստոնյային:

Սրբապատկերը, ըստ ս. Բարսեղ Կեսարացու, ունի այն հատկությունը, որ պատկերավոր կերպով օգնում է քարոզչին լրացնելու իր խոսքը՝ դարձնելով այն ավելի արտահայտիչ ու տպավորիչ: Ս. Յովհաննես Ոսկեբերանը (Դ դար) եզրակացնում է, որ այդ պատկերները քրիստոնյային հոգեւոր միութարություն են պարգևում: Սրբապատկերներն առաջացնում են խանդավառանքի արցունքներ: Օրինակ՝ ս. Գրիգոր Նյուսացին (Դ դար) չէր կարողանում առանց արցունքների դիտել Իսահակի գոհաբերության պատկերը: Խիստ կարեւոր է սրբապատկերի խրատական դերը. այն զգաստության, ապաշխարության կոչ է՝ ուղղված մեզ: Այս առումով հատկանշական են Ս. Գրիգոր Աստվածաբանի (Դ դար) նկատառումները սրբապատկերի խրատող եւ հորդորող նշանակության վերաբերյալ: Սուրբ հայրերը նշում են նաեւ սրբապատկերի ուսուցանող հատկության մասին: Պատկերավոր լեզվով եւ տեսանելի կերպով նա մեզ է փոխանցում Սուրբ Գրքի պատգամներն ու պատմությունները:

Սրբապատկերի խորհուրդը

Սրբապատկերի մասին Ընդհանրական Եկեղեցու հայրերի հայտնած տեսակետները հետագայում դարձան այն հիմքը, որի վրա վեր խոյացավ նրա աստվածաբանությունը: Ըստ դրա՝ սրբապատկերը Եկեղեցու եւ եկեղեցական ծիսակարգի անբաժանելի մասն է: Նա կարեւորագույնն է պաշտամունքի ընթացքում օգտագործվող ծիսական բոլոր առարկաների մեջ: Ինչո՞ւ. որովհետեւ սրբապատկերի գոյաբանական հիմքում ընկած է Հիսուս Զրիստոսի գերբնական մարմնավորման անձամեղի իրողությունը: Աստված Իր եղբայրը Հոգի է, այսինքն՝ Նրան անհնար է նկարագրել, քայքայել եւ մարմին է առնում, ապա վերցնում է Իրեն Ե միացնում մարդկային բնությունը, որով ձեռք է բերում նաեւ նյութական կերպար, իսկ սա էլ հնարավոր է դառնում պատկերել: Այսինքն՝ հոգեւոր եղբայրն արտահայտվում է զգայական կերպարի մեջ եւ միջոցով: Հետեւաբար սրբապատկերը հայտնաբերական բնույթ ունի, քանի որ գրավոր հայտնությունը (Սուրբ Գրքը) այս պարագայում մեզ է հաղորդվում կերպարվեստի լեզվով: Պատկերի միջոցով քաջահայտվում



են մաքուր, միայն մտքում հասանելի աստվածային իրականության խորհուրդները: Սրբապատկերը, մեր հայացքը վերցնելով իր վրա, զգայական դիտումով մեր միտքը բարձրացնում է դեպի մտային (հոգեւոր) հայտնություն: Տեսնելով պատկերը՝ մենք մտովի դիմում ենք պատկերվածին: Դա կատարվում է Սուրբ Հոգու ներգործմամբ. աստվածային շնորհը, որ առկա է սրբապատկերում, մեզ է տրվում հանուն նրա վրա պատկերվածի: Այդ պատճառով էլ մենք պետք է հավատով, երկյուղածությամբ ու երկրպագությամբ մերձենանք սրբապատկերներին եւ մեր աղոթքն ու խնդրանքն ուղղենք Աստծուն: Այսպիսով իրականանում է մեր հոգեւոր մերձեցումը պատկերվածի հետ: Դա նաեւ խոսում վկայությունն է այն բանի, որ երկրային Եկեղեցում իրապես ներկա է երկնային Եկեղեցին, եւ նրանց խորհրդական միությունն անքակտելի է: Այսպիսով՝ սրբապատկերի գլխավոր խնդիրը քրիստոնյային դեպի սրբություն, դեպի աստվածային նորոգություն իրավիրելն է:

Սակայն երբ աղոթում ենք սրբապատկերի առջեւ, պետք է հստակ գիտակցենք, որ մեր աղոթքն ուղղված է ոչ թե պատկերին, այլ այն անձին, ով առկա է պատկերի վրա:

՝ հավատացյալ հայորդիների խոնարհման եւ աղոթքի համար: Սրբապատկերն օծվել է սույն թվականի ապրիլի 23-ին՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցած Հայոց եղեռնի զոհերի սրբադասման արարողության ժամանակ:

Սրբապատկերը մայր եկեղեցում կմնա մեկ ամիս:

Հայ Եկեղեցին եւ սրբապատկերը

Ի սկզբանե Հայ Եկեղեցին եղել է պատկերահարգ: Հայ եկեղեցական արվեստում սրբապատկերները հիմնավոր կիրառություն են ունեցել թե՛ առանձին պատկերներով եւ թե՛ որմնանկարչության, մանրանկարչության, քանդակագործության մեջ: Մեր Եկեղեցու հայրերն ըստ անհրաժեշտության բազմիցս արտահայել են իրենց դրական վերաբերմունքը սրբապատկերների հանդեպ: Այս առումով հատկապես կարեւոր են ս. Վրթանես Զերթողի (Է դար), ս. Յովհաննես Օծնեցու (Ը դար), ս. Յովհաննես Սարկավազի եւ ս. Ներսես Շնորհալու (ԺԲ դար) հայտնած տեսակետները: Դրանք ընդհանուր առմամբ համահունչ են սրբապատկերը քննադատող ընդհանուր քրիստոնեական ընկալումներին: Սակայն կան նաեւ որոշակի տարբերություններ.

ա) մեր Եկեղեցում սրբապատկերն օգտագործվում է ավանդաբար՝ առանց դավանաբանական բանաձեւման,

բ) Հիսուս Զրիստոսի, խաչի, Աստվածամոր պատկերները երկրպագելի են, իսկ սրբերի պատկերները՝ միայն պատվելի կամ մեծարելի,

գ) մեր Եկեղեցում սրբապատկերը գործածելի է դառնում միայն հատուկ կարգով օրհնվելուց եւ օծվելուց հետո:

«Տեսանելին անտեսանելիի մեջ». հաճախ այսպես են քննարկում սրբապատկերի հասկացությունը: Եվ այս քննարկումը, ճշմարտապես, լիովին համապատասխանում է իրականությանը: Իբրեւ հաստատում՝ վկայակոչենք ս. Գրիգոր Աստվածաբանին. «Ես ընթանում էի առաջ, որպեսզի ճանաչեմ Աստծուն: Ուստի եւ կտրվեցի նյութից եւ ողջ մարմնական աշխարհից: Ես հավաքվեցի ինքս իմ մեջ, որքան որ կարող էի, եւ բարձրացա լեռան գագաթը: Բայց երբ բացեցի աչքերս, միայն տեսից կարողացա տեսնել Աստծուն, եւ այն պատված էր Վեմով, այսինքն՝ Բանի մարդեղությամբ, որ մարմնավորվեց մեր փրկության համար: Ես չկարողացա հայել Ամենասուրբ Գերբնությունը՝ Ինքն Իրենով միայն ճանաչվող, այսինքն՝ Սուրբ Երրորդությամբ: Զանգի եւ չէին կարող հայել այն, ինչ... ծածկված էր քերուկներով, այլ՝ մնայն այն, ինչ գալիս էր դեպի մեզ ԱՐԱՐԱԾԻ ՄԵՋ ՏԵՍԱՆԵԼԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀՐԱՇԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ»:

Ավետ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Արվեստագետ



610 թ. Պարսկաստանի խոսրով Բ Փարվեզ (590-628 թթ.) թագավորը հերթական ռազմական գործողություններն է սկսում Բյուզանդական կայսրության դեմ: 614 թ. պարսկական զորքը մտնում է Երուսաղեմ, սրի քաշում բնակչության զգալի մասին, շատ շատերին էլ՝ գերեզմարում: Գերի են վերցնում նաև Երուսաղեմի Չաքարիա պատրիարքին ու Տիրոջ խաչափայտը եւ բազում ավարների հետ ուղարկում խոսրով արքային:

622 թվականից Հերակլը հաղթական մարտեր է մղում պարսիկների դեմ, որոնց մասնակցել է նաև հայկական մի գորագունը՝ իշխան Մծեծ Գևուհու գլխավորությամբ: 628 թ. արդեն կայսերական զորքը մտնում է Տիգրիս: Լարված իրավիճակում գտնվող պարսիկները գահընկեց են անում

խոսրով թագավորին, սպանում եւ գահ բարձրացնում նրա որդուն՝ Կավատ Շերոյին, ով հաշտություն խնդրելով՝ վերջ է դնում պատերազմին: Հաղթանակած բյուզանդական զորքը 629 թ. Տիրոջ խաչափայտը Պարսկաստանից հանդիսավոր թափուրով վերադարձնում է Երուսաղեմ: Վերադարձի ճանապարհին անցնում էր Հայաստանով, որտեղ ժողովուրդը խանդավառությամբ ընդառաջ էր գնում եւ ուղեկցում սուրբ խաչափայտը:

Գերեզմարձի ողջ ճանապարհին Հիսուսի խաչափայտն ամենուրեք վեր էր պարզվում ու փառաբանվում՝ որպես Զրիստոսի հրաշփառ հարության խորհրդանիշ:

Խաչվերացը Հայոց Եկեղեցու հինգ տաղավար տոներից է եւ նշվում է սեպտեմբերի 14-

ԽԱՅՎԵՐԱԳՐ

ին մերձակա կիրակի օրը, այսինքն՝ սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակամիջոցում:

Տոնի կիրակի երեկոյան կատարվում է խաչի բարձրացման հանդիսավոր արարողություն եւ անդաստանի կարգ: Արարողությունն սկսվում է ռեհանով ու ծաղիկներով զարդարված խաչը հանդիսավոր թափուրով եկեղեցու բակ դուրս բերելով: Չարդարված խաչով թափորապետը խաչակնքում եւ օրհնում է աշխարհի չորս կողմերը՝ բարեկարգություն ու խաղաղություն հայցելով Աստծուց, վարդաշուր ցողում հավատացյալների վրա, որից հետո խաչը ներս է տարվում եկեղեցի եւ դրվում ս. Սեդակի վրա: Արարողությունից հետո սկսվում է երեկոյան ժամերգությունը:

Այս տարի, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, Խաչվերացը նշվեց սեպտեմբերի 13-ին, պատարագիցը Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանապետ Միշակ եպս Խաչատրյանն էր:

Խաչվերացը ժողովրդական կենցաղում

Ժողովրդի մեջ այս տոնը տարածված է Սյրբխեշ կամ Ունտց անուններով: Ամենուր նախապատրաստվում էին՝ տոնը հանդիսավորությամբ նշելու: Այդ ժամանակ հիմնականում ավարտվել էին գյուղատնտեսական աշխատանքները եւ մասնավորապես՝ բերքահավաքը: Տանտիրուհիները կարգի էին բերում բնակարանները, տնտեսությունը եւ

սպասում ուխտավոր հյուրերին: Այս առումով ուշագրավ են Հարքում պահպանված ավանդույթները, ուր Սբ Խաչի պատը կոչվում էր Նան ու Տրի, որ քրդերեն նշանակում է հաց եւ խաղող կամ հաց ու խաղողի տուն: Հավանաբար Նանուտրին էլ հին Ամասոր «ամենաբեր պտղոց» դից տոներից մնացած մի սովորություն կամ պաշտամունք էր, որովհետեւ այդ տոնին գերեզմաններ էին գնում եւ աղբատներին անվճար հաց, խաղող եւ այլ միզեր բաժանում (*Մկրտչյան Սամվել, Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ եւ արդիականություն), Եր.*): Աստվածածնի եւ Սբ Խաչի պատերից սկսած՝ աշունն արդեն կամաց-կամաց իրեն զգացնել էր տալիս. դրա համար ասում էին՝ «Աստվածածնա բակը մտիր, Սրբ Խաչին՝ ծակը մտիր»: Այնուհետեւ զալիս էին Յոթաբթյանը, այսինքն՝ առանց տոների եւ պատերի անցնող յոթ շաբաթների շրջանը: Իսկ հետո սկսվում էին Հորթթթողի եւ Նախըրթողի պատերն ու տոնական տարին փակվում էր Նավասարդով:

Խաչվերացի ամենաբնորոշ հատկանիշն ուխտագնացություններն էին: Վահան վրդ. Տեր-Մինասյանը գրում է, որ անցյալում այս տոնին կատարվում էին անթիվ ուխտագնացություններ ամենուր, «որ ուխտատեղի կա, շեն վանք կա, Թուխ-մանուկ կա, Խաչ-աղբյուր կամ Խաչածոր կա...»:

Շարունակությունը՝ էջ 5



Ելու գոհունակությամբ կը հաղորդենք թեմիս համայն հաւատացեալներուն, թէ Մեքսիքոյի Հայց. Եկեղեցւոյ թեմը նոյեմբեր 14-ին 2014 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ փոխանցուեցաւ Հայց. Եկեղեցւոյ ԱՄՆ Արեւմտեան հայոց թեմի հոգեւոր եւ վարչական իշխանութեան: Անցնող 9 ամիսներու ընթացքին թեմակալ առաջնորդ Յովնան արք. Տերտրեան հովուական հինգ այցելութիւններ շնորհեց Մեքսիքոյի հայ համայնքին՝ անոնցմէ ամենէն վերջինը ըլլալով այս տարուան ապրիլ ամսուան մէջ՝ ներկայ գտնուելու երկրի մայրաքաղաք Մեքսիքո Սիթիի «Museum of Tolerance»-ի մէջ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած մեծ ցուցահանդեսին:

Մարտ 15-ին Մեքսիքոյի հայ համայնքի հաւատացեալները եւ սրբազան հօր ընկերացող պատուիրակութիւնը մասնակցեցան «Metropolitan Cathedral» (Կաթօլիկ) առաջնորդանիստ Մայր տաճարին մէջ մատուցուած սբ Պատարագին: Պատարագին եր Կարտինալ Նորպետոս Ռիվերա Գարեա՝ Մեքսիքոյի Հռոմեական Կաթօլիկ Եկեղեցւոյ արքեպիսկոպոսը: Յովնան սրբազանը մասնակցեցաւ Միջեկեղեցական հոգեւորական-

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԵՔՍԻՔՕ ՍԻԹԻԻ ՄԷՋ



ներու հետ միասին, որուն մաս կը կազմէին ներկայացուցիչներ Անտիոքեան Օրթոդոքս Եկեղեցւոյ, Մարոնիներու Եկեղեցւոյ, Անգլի-

քան Եկեղեցւոյ, ինչպէս նաեւ հրեական հաւատքի ներկայացուցիչները:

Մատուցուած Պատարագի մասին լայնօրէն անդրադարձան տեղական լրատուական միջոցները եւ հեռուստահաղորդումները:

Ուրախութեամբ կը հաղորդենք, որ անցնող կարճ ժամանակուան մէջ մեծ ջանք թափուեցաւ Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հոգեւոր առաքելութեան զարկ տալու Մեքսիքո Սիթիի մէջ, որուն մեծ սիրով եւ նուիրումով իր գորակցութիւնը ցուցաբերեց մեքսիքաբնակ հայ համայնքը՝ վերադառնալու համար իր իսկական եւ հայկական արմատներուն: Առաջնորդ սրբազան հայրը շեշտեց դեսպան Գրիգոր Յովհաննիսեանի դերը՝ միացնելու համար հայ համայնքը՝ Մեքսիքոյի մէջ Հ. Հ. դեսպան նշանակուելէն ի վեր:

Օգոստոս 30-ին Յովնան արք. Տերտրեան նաեւ Պատարագ մատուցեց Մեքսիքո Սիթիի «Our Lady of Lebanon» Մարոնիներու Եկեղեցւոյ մէջ, որ առաջին անգամն էր, որ

Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Պատարագը կը մատուցուէր ազգեկներու երկրին մէջ: Առաջնորդ սրբազան հօր Մեքսիքո Սիթի կատարած հինգերորդ այս հովուական այցելութեան իրեն կ'ընկերակցէին Ներսէս քնյ. Հայրապետեան՝ հոգեւոր հովիւը Սանթա Գարիթա Յովիտի Հայց. Եկեղեցւոյ եւ առաջնորդարանի Երիտասարդաց վարիչ Արտակ սրկ. Խաչիկեան:

Մայր տաճարը գրեթէ լեցուած էր հայ հաւատացեալներով, որոնք հոգեկան վերացում ունեցան՝ ակնատես դառնալով մատուցուած եպիսկոպոսական Պատարագին: Արարողութեան աւարտին սրբազան հայրը կատարեց խաղողի օրհնութիւնը եւ բացատրեց անոր հոգեւոր նշանակութիւնը:

Իր խօսքին մէջ սրբազան հայրը խորին երախտագիտութիւնը յայտնեց Ճորճ Սաատ Ապի Եուլեւ սրբազանին, որ եպիսկոպոսն է Մեքսիքոյի Մարոնի Եկեղեցւոյ, իր ջերմ ընդունելութեան եւ սիրալիր հիւրընկալութեան համար:

Առաջնորդ սրբազան հայրն իր պատգամին մէջ խօսեցաւ Լիբանանի ունեցած ճակատագրական դերի մասին՝ հայ Սփիւռքի ստեղծման համար՝ Հայոց ցեղասպանութենէ եւ հայ ժողովուրդի ակամայ տեղափոխման հետեւանքով: Սրբազան հայրն իր խօսքին մէջ ըսաւ. «Կասկած չկայ Հայ եւ Լիբանանի ժողովուրդներու փոխադարձ սիրոյ եւ յարգանքի մասին: 1915 թուի Հայոց ցեղասպանութենէն ետք, Լիբանան մեծ սիրով ընդունեց տասնեակ հազարաւոր Հայ գաղթականներ եւ անոնց ազգային ժառանգութիւնն ու մշակութիւնը»:

Կանուխ երեկոյան, Հայաստանի դեսպան Գրիգոր Յովհաննիսեան եւ տիկինը ջերմ սիրով դեսպանատան մէջ հիւրասիրեցին հիւրերը:

Առաջնորդ սրբազան հայրը հիւրերուն մօտ անդրադարձաւ նորահաստատ համայնքի ապագայ ծրագիրներուն՝ յայտնելով մայրուն հոգեւոր հովիւի մը նշանակումը եւ այնուհետեւ ժամանակի ընթացքին կառուցումը հայկական ոճով եկեղեցւոյ:

Դիան առաջնորդարանի

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են հոգեւոր սպասավորների նոր նշանակումներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում եւ Հայ Եկեղեցու թեմերում:

Խորեն վրդ. Հովհաննիսյանը ծառայության է կոչվել Վիրահայոց թեմում: Գեղարդ քնյ. Դաբադյանը, ազատվելով Հնդկաստանի հայոց հոգեւոր հովվությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Արմավիրի թեմում:

Համբարձում քնյ. Դանիելյանը, ազատվելով Բաղաշի հոգեւոր առաջնորդությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի տեղեկատվական համակարգում:

Կատարվել են նաեւ 2015 թ. հուլիսի 26-ին քահանայական ձեռնադրություն ստացած քահանաների նշանակումներ:

Թադեոս քնյ. Թադեոսյանը ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, Թորգոմ քնյ. Վարդանյանը՝ Վիրահայոց թեմում, Արշավիր քնյ. Ասատրյանը՝ Տավուշի թեմում, Դարգեւ քնյ. Չեխալյանը՝ Սյունյաց թեմում, Կարապետ քնյ. Դարիբյանն իր հոգեւոր ծառայությունը կբերի Ոսկրահայի հայոց թեմում, Խակ Աբրահամ քնյ. Մարտիրոսյանը՝ Գուգարաց թեմում:



ԿՐԻՍՏՈՆՅԱՆ ԸՆ ԿԱՄԱՐԱՐ

Կրիստոնեական եկեղեցու հավանաբար դրույթները, հասկանալի համակարգի արարողությունները, հավանաբար բանաձևերն ու եկեղեցական խորհուրդներն անցել են պատմական երկարատև զարգացման ուղի:

Ս. Գրիգոր Տաթևացին գրում է. «Խորհուրդ է ծածկելոյ իրաց յայտնութիւն», այսինքն՝ խորհուրդը թաքնված, քողարկված իրողությունների բացահայտումն է (Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 199):

Խորհուրդները եկեղեցական այն արարողություններն են, որոնց միջոցով հավատացյալներն ընդունում են Սուրբ Հոգու շնորհները, այլ խոսքով՝ քրիստոնյան հարաբերության մեջ է մտնում անտեսանելի ու անշոշափելի, սակայն գոյություն ունեցող հոգեւոր իրողությունների հետ՝ տեսանելի արարքների, անձանց եւ լսելի խոսքերի միջոցով: Գերբնական ու աստվածային խորհրդակատարության ժամանակ կրթվող են տեսանելի իրերի միջոցով մտնելու են մարդուն:

Արշակ Տեր-Միքելյանն այսպես է սահմանում «խորհուրդ» եզրը. «Եկեղեցու Սուրբ Խորհուրդ կոչում ենք եկեղեցու վարչապետության այն արարողական մասը, որ աստվածապաշտության այն կատարելապես արարողությունը, որով իրապես իրաքանցիորդ ոչ նախ՝ Զրիստոսի եւ եկեղեցու իսկական եւ միակից անդամն է ճանաչում եւ այն խոստովանում, եւ երկրորդ՝ իրականապես թե՛ իբրեւ անհատ եւ թե՛ իբրեւ համայնքի անդամ, մտնում է Զրիստոսի ամենամտերիմ եւ բական հաղորդակցության մեջ, մտնում, ամրանում եւ շնորհներ վայելում» («Հայաստանեայց եկեղեցու քրիստոնեականը», Վաղարշապատ, 1900, էջ 363):

Խորհուրդներով Սուրբ Հոգու անտեսանելի եւ անկյութական շնորհներն ու պարգևները տեսանելի արարքներով փոխանցվում են հավատացյալին՝ նրան վերածելով Սուրբ Հոգու տաճարի: Խորհուրդների մասնակցելիս պետք է ունենալ անկեղծ եւ աներեք հավատք, քանզի այն

մեզ արժանի է դարձնում Ս. Հոգու շնորհներին: Այս մասին Եղիշե պատմիչը գրում է. «Որպէս դժուարագոյն է կեալ ջրայնոց ի ցամաքի եւ ցամաքայնոց ի ջրոյ, առաւել եւս դժուարագոյն է առանց հաւատոյ ընդունիլ զպարգէսն Հոգւոյն Սրբոյ» («Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երեւան, 1989, էջ 313):

Դարերի ընթացքում խորհուրդների արարողակարգը կատարելագործվել է, գրվել են աղոթքներ, քարոզներ, ճառեր, շարականներ:

Դեռեւս Հին Կտակարանում արտացոլված է մեղքի համար զղջալու, կատարած հանցանքի դիմաց որոշակի պատիժ կրելու սովորույթը: Եկեղեցու նշանավոր հայրեր Ամբրոսիոսը, Օգոստինոսն ու Հովհան Ոսկեբերանը որպէս «ապաշխարության» առաջին դեպք նկատում են Ադամի ու Եվայի խոստովանությունն Աստծուն: Վերջիններս գիտակցեցին իրենց անհնազանդությունը, իրապես զղջացին եւ Տիրոջ խոստովանեցին իրենց մեղքը (Մանդ. Գ):

Երկնային Հայրը նույնիսկ եղբայրասպան Կայեֆին զղջման ու խոստովանության հնարավորություն տվեց, սակայն վերջինս չընդունեց սեփական մեղքը, իրապես չզղջաց եւ չխոստովանեց, ուստի Տերը երես թեքեց նրանից եւ ներման չարժանացրեց (Մանդ. Դ):

Հին Ուխտում ապաշխարանքից հետո հիմնականում զոհ էին մատուցում. «Նա, ով խոստանա չար կամ բարի գործ կատարել եւ այդ խոստումը հաստատի երդմամբ, եւ եթէ նա մոռանա, իսկ հետո հիշի այդ, միեւնոյն է, նա մեղանջած է լինում: Նա պետք է խոս-



տովանի իր մեղքերը: Տիրոջ նկատմամբ կատարած իր հանցանքների ու գործած մեղքերի համար նա հոտից մի էգ գառ կամ մի էգ ուղ թող զոհ մատուցի: Զահանան դրանով քակություն պիտի տա նրա մեղքերին, եւ նա թողություն պիտի ստանա» (Ղեւտ. Ե 4-6):

Տվյալ ժամանակաշրջանում եւ պատմամշակութային այդ միջավայրում ապրողները հստակ գիտակցում էին ապաշխարության կարեւորությունը: Այդ են վկայում հինկտակարանյան բազմաթիվ հատվածներ. «Մեղքերս քեզ ցույց կտամ եւ անօրէնությունս չեմ ծածկի քեզանից: Ասացի, թէ կխոստովանեմ մեղքերն իմ, եւ դու թողություն կտաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտությանը» (Սաղմ. ԼԱ 5-6): Չնայած Դավիթ թագավորն ուներ իշխանություն, հարստություն, փառք՝ միեւնոյն է գիտակցում էր սեփական մեղքերը. «...Եթէ երբեւէ իմ չարականներին չարությամբ եմ հատուցել, թող եւս էլ իսպառ կորչեմ թշնամիներիս ձեռքով» (Սաղմ. Ե 5-6): Նա Աստծո գթասրտությունն ու ողորմածությունն

եր հայցում՝ հուսալով Աստծու գտնել. «Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի հիվանդ եմ եւ, բժշկի՛ր ինձ, քանզի ոսկորներս խախտվել են: Անձն իմ հույժ խռոված է... Դարձի՛ր, Տէ՛ր, փրկի՛ր ինձ, ազատի՛ր ինձ, Տէ՛ր, Զո ողորմությամբ» (Սաղմ. Զ 3-4):

Երբ մեղանջում ենք, ընկնում ենք չարի որոգայթը, դառնում «չարի աղախինը»: Աստված անսահման սեր ու բարություն է, ինչն էլ թույլ է տալիս մեզ հուսալ, որ մեր մեղքերը, հանցանքները կներվեն, եւ Տիրոջ անսպառ ողորմածությունը դարման կլինի մեղսավորներիս համար. «Շատ են մեղավորների տանջանքները, բայց ովքեր իրենց հույսը դրել են Տիրոջ վրա, Տիրոջ ողորմությունը կպարուրի նրանց» (Սաղմ. ԼԱ 10-11):

Աստվածաց գրքի Ծ գլուխը կոչվում է «Ապաշխարության աղոթք», որտեղ Դավիթը գիտակցում է սեփական մեղքերի ծանրությունը, զղջում է աղոթում Աստծո ներողամտության արժանատիքը համար. «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Զո մե՛ծ ողորմությամբ եւ Զո գթառատությամբ ջնջի՛ր իմ հանցանքները: Առաւել եւս լվա՛ ինձ իմ անօրէնությունից եւ իմ մեղքերից մաքրի՛ր ինձ: Իմ անօրէնություններս եւ ինքս գիտեմ, եւ մեղքերն իմ միշտ իմ առջեւ են» (3-5 հմր.):

Ապաշխարողը փորձում է դուրս գալ անկյալ վիճակից, հնազանդվել Աստծուն եւ վերականգնել հավատարմությունը Նրա նկատմամբ. «Մի՛ լքի՛ր ինձ, Տէ՛ր իմ Աստված, եւ մի՛ հեռացի՛ր ինձ: Ուշ դարձրո՛ւ, որ ինձ օգնես, ո՛վ իմ փրկիչ Տէ՛ր» (Սաղմ. ԼԵ 22-23), կամ՝ «Անավոտյան Զո ողորմությունն ինձ լսելի՛ դարձրու, քանզի հույսս Զեզ վրա դրի. ցույց տո՛ւր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ...» (Սաղմ. ՃԽԲ 8):

Եսայի մարգարեն, իր ժամանակաշրջանի արատավոր բարբերի ակնատեսը լինելով, ապաշխարանքի եւ խոստովանության մասին գրում է. «...Նախ դու խոստովանի՛ր քո անօրէնությունները, որ արդարացվես» (Ես. ԽԳ 26): Մարգարեն ընդգծում է, որ առանց անկեղծ զղջման ու խոստովանության արդարացում չի կարող լինել:

Իսկ Հովել մարգարեն կոչ էր անում մարդկանց հրաժարվել մեղքերից, եւս կանգնել կործանման տանող ճանապարհից, լսել Տիրոջ պատվիրաններն ու ապաշխարել. «Եվ արդ, - ասում է ձեր Տեր Աստվածը, - դարձե՛ք ինձ ձեր ամբողջ սրտով, ծոմապահությամբ, լալով ու կոծելով: Ձեր սրտերը պատռեցե՛ք եւ ոչ թէ ձեր հագուստները: Այո՛, դարձե՛ք ձեր Տեր Աստծուն, որովհետեւ Նա ողորմած է եւ գթասիրտ, համբերատար եւ բազմողորմ եւ ամիստում է մարդկանց չարքների համար» (Հովել Բ 12-14):

Հին Կտակարանի մյուս գրքերում եւս արտացոլված է մեղքերի թողություն տալու, հանցանքները ներելու գաղափարը: Ըստ մարգարեական մեկնությունների՝ աստվածային ողորմածությունն անսահման է, իսկ Աստված՝ ներողամիտ Հայր, որը սիրով ու գորովանքով սպասում է իր մեղավոր զավակների դարձին. այս մասին Եզեկիել մարգարեն ասում է. «Անօրէնք եթէ հետ կանգնի իր գործած անօրէնություններից ու պահի իմ բոլոր պատվիրանները, արդարություն գործի ու ողորմածություն անի, ապրելով ապրելու է ու չի մեռնելու: Նրա գործած բոլոր մեղքերը, կատարած բոլոր անիրավությունները չեն հիշվելու, այլ իր գործած արդարության համար նա ապրելու է: Մի՞թէ եւս մեղավորի մահն եմ տեսնում, - ասում է Տեր Աստվածը, - եւ ոչ թէ այն, որ նա չար ճանապարհից հետ դառնա ու ապրի» (ԺԸ 21-24):

Շարունակությունը՝ էջ 6

Սուրբ Աստվածածնի անկեղծ

Սկիզբը՝ թիվ 15

Ավետում

Ավետարանն ասում է, որ Աստված Գաբրիել հրեշտակին ուղարկեց Քալիլիայի Նազարեթ քաղաքում ապրող Մարիամ կույսի մոտ, ով Հովսեփ անունով մի բարեպաշտ մարդու նշանածն էր եւ ապրում էր նրա տանը: Եվ հրեշտակը Մարիամին ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է»: Մինչ Մարիամը մտածում էր այս խոսքերի իմաստի մասին, հրեշտակը հավելեց. «Մի՛ վախեցի՛ր, Մարիա՛մ, որովհետեւ Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա դու կհղիանաս եւ կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի եւ Բարձրալի Որդի կկոչվի: Եվ Տեր Աստված Նրան կտա Նրա հոր՝ Դավթի անունը, եւ Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու Նրա թագավորությունը վախճան չի ունենա»: Ահա այս՝ մեր Տեր Հիսուս Զրիստոսի ծննդյան մասին բերկրաբեկ լուր տալուն է նվիրված Ավետման տոնը:

Ս. Կույսի ստացած ավետիսով մարդկային ցեղի նախամայր Եվայի մեղքի պատճառով կորցրած շնորհները վերականգնվեցին: Ս. Կույսը մայրացավ, դարձավ Աստծու մայրը, կրեց Նրան իր սուրբ արգանդում 9 ամիս 5 օր՝ ապրիլի 7-ից մինչեւ հունվարի 6-ը:

Սուրբ ավետմամբ պատվվեց ոչ միայն Կույս Մարիամը՝ արժանանալով Աստծո Մայր կոչվելու եզակի եւ բարձրագույն պատվին, այլեւ պատվվեց մայրությունն ընդհանրապես:

Հայ Առաքելական եկեղեցին հունց ի վեր ապրիլի 7-ին տոնում է Ավետումը, որն այժմ նաեւ նշվում է պետականորեն՝ որպէս Մայրության եւ գեղեցկության օր: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Կաթողիկոսի հրամանով այս տոնը հռչակվել է նաեւ իբրեւ Մայրության օրհնության օր: Այդ օրը Հայաստանյայց առաքելական բոլոր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնություն:

Տուփի գյուղում

Սուրբ Աստվածածնին նվիրված տոների շարքում մեր եկեղեցին հիշատակում է նաեւ Տիրամոր տուփի եւ գոտու գյուղերը: Լեւոն կայսրի ժամանակ, որ թագավոր դարձավ 457 թ., երկու իշխաններ՝ Գալբիոն ու Կամիլիոսը, ամենօրինալ Աստվածածնի շնորհով արիսի աղանդից դարձան ուղղափառ եւ գնացին ուխտի Երուսաղեմ:

Գալիլիայում շրջելու ժամանակ տեսնում են հրեա մի կնոջ մոտ մի տապալակ՝ վառված մոմերով եւ խնկի բուրմունքով: Երբ հետաքրքրվում են տուփով, հրեա կինը պատասխանում է, որ այդ տապալակի մեջ եղել է սուրբ Կույսի գլխաշորը, որով բազմաթիվ հրաշքներ են կատարվել տառապալների շրջանում: Այդ իմաստով՝ երկու իշխանները հաջողացան եւ տուփը փոխարինել կրկնօրինակով եւ այն ապահով հասցնում են Կ. Պոլիս:

Թագավորը եւ պատրիարքը մեծ հանդեսով ընդունում են զանձը եւ տեղադրում այն

Սուրբ Աստվածածնին նվիրված տաճարի մեջ:

Գոտու գյուղում

Մեծն Թեոդոսի որդի Արկադիոս կայսրը (395-408) փնտրել է տվել Աստվածածնի գոտին, եւ գտնելուց հետո այն եւս բերվել է Կ. Պոլիս: Դրվել է փոքրիկ արկղի մեջ եւ կնքվելով արքունի մատանիով՝ պահվել է Սուրբ Աստվածածնի Նորաշեն եկեղեցում:

Սբ Աստվածածնի տուփի եւ գոտու գյուղերին նվիրված տոները մեր եկեղեցու տոնացույցի մեջ են անցել Սիմեոն Երեմանցի Կաթողիկոսի կողմից 1774 թ.:

Այս տոներից բացի՝ կան նաեւ ավանդություններ, որոնք պատմում են նաեւ Աստվածածնի մազերի մատուցների մասին: Ըստ սրբազան ավանդության՝ Հովհաննես ավետարանիչը կամ Մարիամ Մագդաղենացին նկնումի օրը կտրում են սուրբ Կույսի մազերից եւ պահում հավատացյալների մխիթարության համար:

Սուրբ Կույսի տուփի եւ գոտու գտնվելը տոնում ենք, որպեսզի վերհիշելով այս պատմությունները՝ մեկ անգամ եւս հիշենք սուրբ Աստվածածնին եւ նրա միջոցով փառավորենք Զրիստոսին:

Սբ Աստվածածնին իր դերով շատ մեծ է քրիստոնեական մտածողության մեջ: Նա է համարվում գլխավոր բարեխոսող մարդկության՝ «Սուրբ գԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխոսս արացուց առ Հայր ի յերկինս...»: Եվ պատահական չէ, որ հայկական եկեղեցիների



բոլոր խորանները զարդարում են սբ Աստվածածնի հրաշագեղ պատկերները, որպես երկնային դուռ ողջ մարդկության՝ «Աստվածածին՝ երկնային դուռն աստվածային»:

Սբ Կույսն իր Ավետման օրվանից դարձավ աստվածակիր եւ աստվածամայր, քանի որ իր որովայնում կրեց Աստվածային, որով վեր բարձրացրեց կնոջ կերպարը իր մեղսական վիճակից՝ դառնալով յուրաքանչյուր քրիստոնյա զավակի համար սիրելի մոր կերպար:

Լուսինե ՉԱԲԱՐՅԱՆ



Սկիզբը՝ թիվ 16

Բ.

Գառնիկ Շահինյանն ամենայն հավանականությամբ ծանոթ էր Չարենցի «Եպիքական լուսաբաց» ժողովածուին, ինչի մեջ գտնվում է «Թուրք»-երի ձեռքով ահա գրում է իրենց՝ «Թուրք» առ բանաստեղծն Չարենց, նախքան մի հին պոետից»։ Այս «Թուրք»-ը պահպանվել է հեղինակի ինքնագրով՝ վանդակավոր մի տետրի մեջ եւ մեքենագիր տարբերակներով։ Մեքենագրությունը սոսկալի վատ է՝ սխալներով ու բացթողումներով։ Ամենայն հավանականությամբ արվել է ՊԵՎ-ում՝ հետաքննիչների աշխատանքային օգտագործման համար, որովհետեւ «վտանգավոր» տողերի տակ՝ տների կողքին, պահպանվել են կրակն մատիտի հետքերը։

318 տողից բաղկացած պոեմ է, ունի նախերգ, վերջերգ, գրված է քառատողերով։ Կան սեւագիր տողեր։ Գրված է 1932-ին Ստալինգրադում։

Բանաստեղծն ու իր ընթերցողը

Ավսիայտ է Չարենցի ազդեցության ոճավորումը, ակնհայտ է նաեւ բանաստեղծական ձիրքը, բայց ոչ՝ վարպետությունը։ Ունի ազգային նկարագիր, քաղաքացիական կեցվածք եւ Չարենցին արժանի ընթերցող է։ Այս ընթերցող բանաստեղծին ոգևորել է եւ այն, որ Չարենցը երբեք է անցել է Ցարիցինով, որտեղ՝ վերանվանված Ստալինգրադում, ինքը հիմա ապրում է։

Առաջին տողերը հուշում են, որ հեղինակը մտերիմ է եղել Չարենցի հետ, ումից տարեց էր տասը տարով։ Ահա մուտքի առաջին տողերը.

Սիրելի եւ հին բարեկամ,
Հիշում եմ քեզ, երբ եկար
երեսն անգամ անգամ,
Եվ մեր գրույցները երկար:
Հեռու եմ հիմա քեզանից,
Ընկել եմ շոգ Ստալինգրադ,
Սրտումս անորոշ մի թախիծ,
Օրերս տարտամ ու վիհատ,
Հարձեղ եմ անսիրտ ու անաստված,
Նախիրի համար հավերժ մեռած:
Վաղորդ, շատ վաղուց է, որ
Ուզում եմ գրել քեզ մի թուղթ,
Ասել սրտիս, մտքիս բոլոր
Եվ հուշերով թեկուզ լինել քեզ հետ:

Նախերգում շարունակում է, որ իրեն ուղեկցում է «հիմը»՝ «Անցյալը սիրելի եւ կորած», ապա անցնում է այլ հարցերի, որոնք «ցանցել են կրա սիրտը»։

Հեռվից հայացք է ուղղում Հայաստանի գրական կյանքին, եւ վերաբերմունքը հստակ է. «Բայց այն, ինչ գրում են հիմա Նախիրի Չարենցն ու Վշտունին // Կարդում ես, մտածում ակամա - // Ո՛ւմ են պետք վարդերն այդ թղթեր»։

Այս եւ համանունն այլ անունները «վտիտ ու գունատ պոետներ են», ուստի վերստին գնահատելի են հները՝ «Վահան, Հովհաննես ու Սայաթ»։ Նորից հիշում է Տերյակին. «Գերեզմանը կրա հեռավոր ու

սուրբ», եւ բացականչում. «Օ՛, Վահան, անմոռաց ուրու»։

Ապրեց նա հեռավոր մի երկրում,
Զմռացավ Մասիս ու Նախիրի,
Օրերը կրա անբերկրում
Որպես օրերը Նախիրի:

Անցնում է Չարենցին, ով կրա համար «սիրելի ու մեծ պոետ է», եւ կրա իսկ «հանգով» մեծարանքի խոսք ասում.

Չարենց, սիրելիս, սիրում եմ,
Սիրում եմ քեզ ինչպես կաս,
Որպես մեծ սկանդալիստ,
Որպես պոետ երկնահաս:

Հիմնականը երկիր Նախիրի ճակատագիրն է՝ խարսխված բանաստեղծի ճակատագրին, ուստի այս տարագիր հայը հեռուներից հարցերի պատասխան է որոնում.

Դեռ տարիներ առաջ Նախիրիում,
Երբ գրուցում էիք մտերիմ,
Դու որոնում էիր Նախիրի Նախիրիում
Եվ հարցնում էիր. «Ո՛րն է Նախիրին»:

Կուզեի իմանալ՝ գտե՛լ ես արդյոք,
Հարցմունքիդ պատասխանը գտե՛լ ես,
Նախիրի՛ ինչու հոգուս հասե՛լ ես արդյոք
Թե՛ դեռ անօգուտ որոնում ես:

Հայրենիքի նվիրյալ այս ընթերցողն իր բանաստեղծական ուղերձում նույն գլխավոր հարցն է անընդհատ շոշափում եւ առիթն օգտագործելով՝ ընկնում հայրենասիրական ազնիվ պոռթկումների մեջ.

Նախիրն ոչ բառ է, ոչ բարբառ,
Ոչ էլ մի հին հողակտոր
Նա արյուն է, քրտինք ու պայքար
Նախիրն երգ է մութերում պղտոր:

Նախիրն իրավունք է ու տենչանք,
Որ ապրելու է՛ր որպես Նախիր,
Եվ ժողովուրդ է որոշ ու միակ
Եվ եզակի է ու անկրկնելի:

Ըստ կրա՝ քամի են կրոներն ու պետությունները, կարելի է «ժողովուրդ-ազգս» է։ Եվ երբ մի օր շատ բան վերանա, հայոց պատմությունը նորից կգրեն՝ «Չարենցի գրքերի հիմունքով»։ Ուստի, Չարենց, դու պարտավոր ես գրել, «Եթե չես ուզում, որ դարերը գան, // Ու գերեզմանիդ տեղը ոսպ ցանեն»,- շարունակում է նա եւ պատգամով.

Չարենց, սիրելիս, եղիր Պուշկին,
Բայց եղիր հայ Պուշկին,
Թե չես քեզ չի փրկի ոճը երկաթ,
Ոչ հողը կարմիր, ոչ Մայակովսկին:

Այսքան ուղղակի խոսքը պայմանավորված է եւ վստահությամբ, եւ Չարենցի հանճարի բարձր գնահատությամբ, որովհետեւ վաղը, երբ նա չի լինի, կրա երգերով են որոնելու Նախիրին, պարզելու կրա գալիքը, քանի որ նա է ամուր հեմարանը, միակ անկեղծ եւ հոգուց խոսողը։ «Անզուգական» ընկերոջը նա իրոք ճանաչում է եւ հարազատի իրավունքով շարունակում.

Զգում եմ կռիվները հոգուդ
Անարյուն կոտորածները կրա,
Ապրում եմ թեքումներդ, վերելքդ,
Վեհությունը ոճիդ ու մտքիդ:

Դարձյալ խորհուրդ է տալիս՝ հայ ժողովրդի «ազատ ու անկախանք» ապրելու երազանքը մշտապես փայտալեւ եւ այդ տողերն ընդգծում է, որովհետեւ ակնարկը խորքում էր։

1915-ից հետո հայության մի հզոր ալիք փայտավ ու փրկվեց Ռուսաստանի տարածքներում, եւ հիմա այս ընթերցող բանաստեղծը հարց է տալիս.

Ուռումների երկրից շար ի շար,
Ու վերջիվերջո, հալածվածները մեր
Ասա ինչու եկան Նախիրստան
Դեպի երկիրն այդ փոքր ու արեւոտ:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 3

Յուրաքանչյուր բնակավայր ուներ տունի նվիրված իր ուխտավայրը։ Մինչեւ այժմ էլ Խաչվերացի տունի նշանավոր ուխտավայրերից է Վայոց ձորում գտնվող Արկազի Սր Խաչ եկեղեցին (Լալայան Երվանդ, Վայոց ձոր, ԱՀ, Գիրք 16, հ. 2, Թիֆլիս, 1906)։ Չանգեզուրում այդ օրը համատարած բնույթ ունեին մերձավոր խաչերին այցելությունները։ Սակայն այստեղ առանձնակի նշանակություն էր տրվում Ծիծեռնավանքին, ուր Սըփ Խաչի կապակցությամբ կազմակերպվում էր զանգվածային ուխտագնացություն, որին մասնակցում էին շրջակա գրեթե բոլոր գյուղերի բնակիչները։ Չնաբերողների համար եւս մեծ ժողովրդականություն վայելող տոներից էր Խաչվերացը՝ Նախիրների հիշատակման օրը։ Այն տեղական բարբառով Խրով Է կոչվում՝ տունի ծիսական գլխավոր ուտեստի՝ թոնրի մեջ ամբողջական գոհաբերված-խորոված ուղի անվամբ։ Ի դեպ, Խաչվերացին Վայոց ձորում, ինչպես մյուս վայրերում էլ մնացած տոներին, տղայի տնից աղչկա տուն էին ուղարկվում խորովը՝ թոնրի մեջ խորոված ուղը, գաթա, հավա, մրգեղեններ եւ հարսնացուկն զգեստներ։

Չոհաբերության նպատակով ուխտավորներն իրենց հետ տանում էին մատաղացու կենդանիներ եւ թռչուններ (ուլ, այծ, աքլոր եւ այլն)։ Տոնի կապակցությամբ եկեղեցիներին եւս մատուցում էին ուրուշակի նվերներ (ուլեր, գորգեր, տարբեր գործվածքներ եւ այլն)։ Այնքան համատարած էր Սր Խաչին ու մատաղ անելու սովորույթը, որ կենցաղում այդ տոնն ուներ նաեւ նշված երեւույթը բնութագրող անվանումներ՝ Ուլոց Ուլեց, Ուլերի կոտորած, Խրով եւ այլն։

Մատաղացու կենդանիներին պտտեցնում էին եկեղեցու շուրջը, որից հետո մորթում կամ ականջները կտրում։ Ուխտավայրում կազմակերպվում էին նաեւ տոնավա-

ճառներ, խաղային-երաժշտական հանդիսություններ, որոնք առանձնակի շքեղություն էին հաղորդում սրբավայրում կազմակերպված ընդհանուր արարողություններին։

Ուխտի էր գնում գրեթե ողջ համայնքը։ Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում հիվանդները, որոնք տասնյակ կիլոմետրեր էին ոտքով անցնում՝ բաղձալի ուխտավայրը հասնելու համար։

Սուսայեցիների այդ տոնին (Խաչելն Չաղագ) ուխտի էին գնում Թովմաս առաքյալի վանքը։ Այս խոնարհված վանքն ավելի ուխտատեղի էր, քան հնություն։

Գրիգոր Գյոզալյանը գրում է, որ «վանքը Ս. Խաչի տոնին դառնում էր մի մրցանակ եւ վերակենդանացած տեսք էր ընդունում։ Յողունությունը կամ հաջի-հաբիլիցին Ս. Թովմաս ուխտի էր գնում՝ անպայման մատաղացու անասունով, ցորենով, ամաններով եւ անհրաժեշտ այլ պարագաներով բեռնավորված» (Գյոզալյան Գրիգոր, Տոներ. Սուսա լեռան ազգագրությունը, ՀՀ ԳԱ Գիտություն հրատարակչություն, Եր., 2001)։

Այդ սրբավայրը Ս. Խաչի տոնին դառնում էր երկու մեծ գյուղերի՝ Յողուն Օլուքի եւ Հաչի Հաբիլիի ու դրանց գյուղակների բնակիչների, մի տեսակ, կենտրոնը։ Բայց, կարծես, Նախաձեռնողը Յողուն Օլուքն էր։ Թմբուկը եւ հարիսայի պատրաստությունը յողունություններն էին տեսնում, ուր քահանայի կողմից Պատարագ մատուցելուց հետո պատրաստում էին սրբազան ուտեստը՝ հարիսան։ Մերձակա գյուղերից եկածներն իրենց հետ ուխտավայր էին տանում մատաղացու կենդանիներ եւ ցորեն։ Թմբուկը եւ հարիսայի պատրաստությունը մասնավորապես յողունությունների մենաշնորհն էր։ Նմա-



10/12/2012

նախապես հանդիսություններ կատարվում էին նաեւ Զարուսի Կերին աղբյուրի թաքստանում։

Չանգեզուրում այդ օրն ուխտի են գնում Ծիծեռնավանք. այստեղ հավաքվում է մեծ բազմություն, մատաղ են արվում հազարավոր ոչխարներ (Լալայան Երվանդ, Չանգեզուր, ԱՀ, Գիրք 2, Թիֆլիս, 1898)։

Սուրբ Խաչին հայ մայրերը, վանքերում իրենց ուխտը կատարելուց հետո, գնում էին Թովմ ամանակներ, որոնք անհիշելի դարերից ի վեր, մանուկ սրբեր լինելով, հանգում են որեւէ խաչքարի կամ սուրբ ծառերի տակ, քանի որ այդ ծառերն էլ են դարեր ի վեր թուխմանակների մարտիրոսության վկա եղել...

Պաշ-քալի Սր Բարդուղիմեոսի վանքում մի ճերմակ գոմեշ էին պահում, որ միշտ անկաշկանդ շրջում էր գյուղից գյուղ, կարող էր մտնել ամենուր՝ ցանքերը, հանդերը, ուտել՝ որտեղ կուզեր, պառկել՝ որտեղ կուզեր։ Ոչ ոք իրավունք չու-

ներ այդ գոմեշին ձեռք տալու կամ քշելու։ Եթե այն սատկում էր, հաջորդ գոմեշը կլիներ այն գոմեշը, որին երազում կտեսներ ծերունի վանականներից մեկն ու մեկը, եւ այդ նվիրական գոմեշը վանք էր բերվում հանդեսներով, երգ ու նվագով։ Նրա պատվին մատաղներ էին արվում։ Միայն թե մատաղացուն չէր կարող գոմեշ լինել։ Ահա այս ճերմակ գոմեշը Խաչվերացի օրը վանք էր վերադարձվում, վրան շուրջառ էին պցում, կոտորները վառվող մեղրամոմերով զարդարում եւ դուրս բերում պտույտի՝ թմբուկներ զարկելով, սրինգ նվագելով, շարականներ երգելով։

Խաչի օրերին Սուշում սր Երիայի անունով ուխտագնացություններ էին լինում բարձրաբերված վայրերը։ Մասնավորապես գնում էին Սշո Հյուդի գյուղի մոտ գտնվող վանքը, որի մոտակա մատուռը յոթ տարին մեկ՝ Խաչվերացի օրը, անգամ կանաչում է։

Որոշ տեղերում մարդիկ իրենք էին խաչ սարքում եւ այն զարդարում գույնզգույն ծաղիկներով, բայց հատկապես՝ ռեհանով. ռեհանն է համարվում խաչի ծաղիկը։ Մարաշում, օրինակ, «խաչը կը զարդարվեր պեւսպիսուն, հոտավետ ծաղիկներով, որոնց մեջ կը գտնվեր Մարաշի անուշահոտ կանաչ ու լայնատերեւ ռեհանը։ Կիները այս արարողությունը իրենց լեզվով կը կոչեին «ըռահեոն ուրշնիլ» (ռեհան օրհնել)»։

Շիրակում այս տոնը կոչվում էր «ուլան դան», երբեմն էլ՝ թուրքերեն «օղաղ դան», որն էլ աղավաղվելով դարձել էր «օղան դան», այսինքն՝ տղաների կոտորած։ Մաշկված, մաքրված ուղ կախում էին թոնիրում՝ տակը նախա-

պես դնելով ձավարեղենով լի կաթսան։ Ողջ գիշեր ուղը դանդաղ խորովվում էր մարմանը կրակի վրա, փակ թոնիրում, իսկ հավաղ ճարպն աստիճանաբար ներծծվում էր տակը դրված ձավարի մեջ՝ առաջացնելով, ինչպես Շիրակում էին ասում, «քաշկակ»։ Այս սովորությունը Վայոց ձորում կոչվում էր «խրով անեք»։ Ուղի մի բուրդ հետագայում տրվում էր քահանային, այն կոչվում էր «մեռելափայ»։ Իսկ Շիրակում, առհասարակ, ողջ ուղը կտորների էին բաժանում, «քաշկակի» հետ միասին լավաշի մեջ փաթաթում եւ տանում գերեզմանաբերի վրա դնում։ Այդ օրը գերեզմանօրհներգից հետո քահանան եւ նրան ուղեկցող մարդիկ ուտում էին այդ կտորները։

Վաղ առավոտյան տնեցիների լավագույն նախաճաշը ուղի ճարպով ներծծված ձավարի փլավն էր, որից հետո ճանապարհվում էին մոտակա գերեզմանատուն՝ հետներն ունենալով մրգեղեն, հատկապես խաղող ու ձմերուկ, խմորեղեն, կաթնասեր, կանաչեղեն, պանիր, եւ, իհարկե, խորոված ուլ։ Այդ օրը գերեզմանատուն տարվող մրգերը «նան ու տրի» էին կոչվում։ Գերեզմանատուն գնում էին ընդհուպ մինչեւ մանկահասակ երեխաները։ Ուղղակի տապալանաբերի մոտ՝ կողք կողքի, բացվում էին սփռոցներ, որոնց վրա շարվում էին բերված ուտելիքները։ Այդ օրը սգի, ողբի օր չէր, այլ՝ ուրախության, թեթեւության։ Քահանայի կողմից գերեզմանների օրհներգից հետո սկսվում էին խնջույքները, որոնց, որքան էլ մեզ համար զարմանալի է, անցնում էին թեթեւ, անկաշկանդ մթնոլորտում։ Փոքր-ինչ գուսպ էին միայն այդ տարի հանգուցյալ ունեցողները, որոնց մոտ հավաքված հարազատները, մտերիմները իրենց վշտակցությունը հայտնում էին մեղմ մաշկությամբ, բայց այստեղ նույնպես ողբի, սգի դրսեւորումներ չպետք է լինեին։

Շարունակությունը՝ էջ 7

Սկզբը՝ էջ 4

ԱՐԽԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՄԻՐՈՒՄԸ

Հին Կտակարանում հանդիպում ենք նաեւ գաղտնի կամ առանձնական խոստովանության ու փոխհատուցմանը վերաբերող աստվածային հրահանգների: Այսպէս՝ Թվոց գրքում գրված է. «Այն տղամարդը կամ կինը, որ մարդկային որեւէ մեղք է գործում, խիստ արհամարհած կլինի Տիրոջը եւ հանցանք գործած կլինի: Թող նա խոստովանի իր մեղքերը, թող լինի հատուցի նրան, ում վնաս է պատճառել եւ վնասի մեկ հինգերորդ մասն էլ ավելացնի հատուցածի վրա» (Ե 6-7):

Առակաց գրքում մեկ անգամ ենք ընդգծվում է ապաշխարության եւ անկեղծ գոջման անհրաժեշտությունը, քանզի «...ամբարշտությունը ծածկողը հաջողություն չի ունենա, բայց բացահայտողը եւ իրեն պահպանողը կդառնա սիրելի» (ԻԸ 13):

Սիրաքը հորդորում էր մեղավորներին ապաշխարել, սիրել իմաստությունը եւ քայլել աստվածահաճախ անապարհով (Դ 13):

Ղեւտացվոց գրքում Աստված պատվիրում է մեղքերը մանրամասն պատմել քահանային, որպեսզի վերջինս կարողանա մեղքին համապատասխան գոհորոշել: Սուրբգրային այս հատվածից կարելի է ենթադրել, որ քահանան պետք է տեղյակ լիներ ոչ միայն գործած մեղքի մասին, այլ նաեւ՝ ինչպիսի հանգամանքներում, գիտակցաբար թե անգիտության հետեւանքով է այն կատարվել (Ե 17-19): Մեղավորն անկեղծանալով պետք է պատմեր արատավոր արարքների մասին, որպեսզի թողութուն գտներ: Այս ամենը վկայում են, որ խոստովանությունն ու ապաշխարությունը հրեաների համար աստվածային հրաման, պատվեր էին (3. Թերմիմանեան, Խորհրդական խոստովանություն, Վենետիկ, 1873, էջ 5):

Վերոնշյալ հատվածները հաստատում են, որ Հին Կտակարանում նշանակում են այն հիմնական դրույթները, որոնք հետագայում հիմք հանդիսացան Ապաշխարության խորհրդի ձեւավորման համար: Ապաշխարության այս սովորույթը հրեաների մեջ պահպանվում է մինչեւ Հիսուս Բրիստոսի ծնունդը: Այդ է վկայում Մատթեոսի Ավետարանը, որտեղ նկարագրվում է, թե ինչպէս էր Հիսուսը մարդկանց նախապատրաստում Մեսիայի գալուստանը՝ մկրտելով եւ մեղքերի խոստովանությունը

լսելով. «...մկրտվում էին նրանից Հորդանան գետում եւ խոստովանում էին իրենց մեղքերը» (Մ 3):

Նոր Կտակարանում Փրկիչը հիմնավորեց ապաշխարության անհրաժեշտությունը, եւ «ապաշխարանքի գաղափարը» հետագայում վերածվեց համաքրիստոնեական խորհրդի, որին առավել ամրոցական եւ համակարգված տեսք տվեցին եկեղեցական նշանավոր հայրերը:

Բրիստոս եկավ մեզ մեղքի տիրապետությունից ազատագրելու եւ ապաշխարության ճանապարհով աստվածային արքայության արժանացնելու: Նա հորդորում էր ապաշխարել եւ սովորեցնում էր աշակերտներին, թե ինչպէս պետք է ներում շնորհել խոստովանողներին (Մարկ. Ա 5): Աստծո Որդին ապաշխարության հիսկտակարանական ընկալման փոխարեն տվեց Նոր մեկնություն. «Քնացե՛ք, սովորեցե՛ք, թե ինչ է նշանակում ողորմություն եւ կամենում եւ ոչ՝ գոհ. քանզի ես արդարեւ չեմ կանգնում ձեր դիմաց, այլ՝ մեղավորներին» (Մատթ. Թ 13): Այս խոսքերով Մեսիան արժեւորում էր ներքին, հոգեւոր ապաշխարանքը, իրական գոջումն ու անկեղծ խոստովանությունը, ողորմածությունը, իսկ մատուցվող գոհի տեսակն ու չափը կորցնում էին իրենց կարեւորությունը:

Բրիստոս ցանկանում էր ապաշխարության միջոցով մեղավոր մարդուն վերականգնել անկյալ վիճակից եւ նրան Աստծո հետ հաշտեցնել: Տիրոջ Որդին, որ ամենքի փրկությունն էր ցանկանում, ապաշխարությունը մեծագույն սիրով հաստատեց, որպեսզի մեղքերով ծանրաբեռնված հավատացյալը կարողանա կրկին աստվածային շնորհներին արժանանալ ու փրկություն գտնել: Նոր Կտակարանի բազմաթիվ հատվածներ վկայում են, որ իրապես գոջացողները հաստատուն հավատքով դիմում էին Բրիստոսին, խոստովանում եւ մեղքերի թողություն ստանում (Ղուկ. Է 47-48): Փրկիչն աստվածային իր գործությամբ «թծվում էր» նրանց՝ մեղքերից արձակելով:

Մեղքերնք նաեւ նորկտակարանյան որոշ հատվածներ, որոնք տալիս են Ապաշխարության խորհրդի աստվածաբանական հիմնավորումը: Մատթեոսի



Ավետարանում ընթերցում ենք Բրիստոսի բարոգը. «Ապաշխարեցե՛ք, որովհետեւ երկնքի արքայությունը մոտեցել է» (Ղ 17):

Հիսուս ընդգծում էր, որ Հայրն էր անսահման սիրով ու գթառատությամբ հոգ է տանում մեղավորների, մոլորյալների փրկության մասին, սպասում նրանց դարձի գալուն. «Ձեզ ինչպէ՛ս է թվում. եթե մի մարդ հայրույր ունի, եւ նրանցից մեկը մոլորվի, ինչուսկից ոչխարը լեռան վրա չի՞ թողնի ու գնա որոնելու մոլորվածին: Եվ եթե պատահի, որ այն գտնի, ճշմարիտ եմ ասում ձեզ, թե նրա վրա ավելի կուրախանա, քան իննսունինի վրա, որ մոլորված չէ» (Մատթ. Դ 12-14):

Մարկոս ավետարանիչը շեշտադրում է Տիրոջ նկատմամբ հավատի եւ ապաշխարության անհրաժեշտությունը. «Ժամանակը հասել է, եւ մոտեցել է Աստծու արքայությունը. ապաշխարեցե՛ք եւ հավատացե՛ք Ավետարանին» (Ա 15):

Իսկ Ղուկասի Ավետարանի ԺԳ գլուխը վերնագրված է «Կոչ ապաշխարության», որտեղ Աստծո Որդին հորդորում է գոջալ, ապաշխարել. Նա գոչաւացնում է, որ չապաշխարողները կորստյան կմատնվեն. «Ոչ, ասում եմ ձեզ, սակայն, եթե չապաշխարեք, ամենքի էլ նույնպէս պիտի կորչեք» (ԺԳ 3):

Մարդ արարածը բազմիցս կամա թե ակամա, ուղղակի կամ ակողմանի մեղքի իշխանության տակ է ընկնում, Աստծո կամքին հակառակ ընթանում, կյանքի դառն փորձություններին ենթարկվում եւ ի հետեւանք այս ամենի՝ կորստյան դատապարտ-

վում, քանզի մեղքի վարձքը մահն է. «...քանի որ մեղքի վարձքը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ համիտեւական կյանք՝ մեր Տեր Բրիստոս Հիսուսի միջոցով» (Հռոմ. 2 23):

Փորձություններն Աստծուց չեն, եւ Նա չէ, որ մեզ փորձությունների է ենթարկում: Այս մասին Հակոբոս առաքյալն ասում է. «Ոչ ոք, երբ փորձության մեջ լինի, թող չասի. «Աստծուց եմ փորձվում», քանի որ Աստված չարից չի փորձվում, եւ ինքն է չի փորձում ոչ ոքի: Յուրաքանչյուր որ փորձվում է՝ հրապուրվելով եւ խաբւելով իր ցանկություններից: Այնուհետեւ ցանկությունը, հղանալով, մեղք է ծնում, եւ մեղքը, հասունանալով, մահ է ծնում» (Հակոբ. Ա 13-16): Սակայն Տերը հնարավորություն է տալիս մեզ գոջալու, ապաշխարելու, մաքրագործելու եւ փրկություն գտնելու, քանզի Նա էր գավակների փրկությունն ու ցանկանում եւ ոչ թե կործանումն ու մահը:

Խաչելությունից ու հարույնությունից հետո Բրիստոսից ժառանգած իշխանությամբ ապաշխարությունն արդեն կատարում էին առաքյալները. «Ամէք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներքե, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չենք, ներված չի լինի» (Հովհ. Ի 21-23):

Գործք առաքելոցը պատմում է, թե ինչպէս առաքյալները Փրկչի ճշմարիտ խոսքը Սուրբ Հոգու գործությամբ տարածեցին ողջ աշխարհում եւ լուսավորեցին մարդկանց մեղքերից կուրացած հոգիները, սիրով ու ջերմեանդությամբ բացատրեցին, մեկնեցին Տիրոջ ավանդածը (ԺԹ):

Տիրոջ առաքյալները եւս քարոզեցին, հանձնարարեցին ի-

րենց հետեւորդներին ապաշխարել ու գոջալ, քանզի մեղքը մարդուն հեռացնում է Աստծուց, միևնույն ապաշխարությունը մոտեցնում է Նրան: Ապաշխարողը Բրիստոսի բարեխոսությամբ եւ սիրով մեղքերի թողություն է ստանում: Հովհաննէս առաքյալն ասում է. «Որոյակներ իմ, այս քանը գրում եմ ձեզ, որպեսզի չմեղանջեք. իսկ եթե մեկը մեղանջի, Աստծու առաջ քարեխոս ունեք Հիսուս Բրիստոսին՝ Արդարին եւ Անարատին. եւ Նա՛ է քաւությունը մեր մեղքերի, եւ ոչ միայն մեր մեղքերի, այլեւ՝ ամբողջ աշխարհի» (Ա Հովհ. Բ 1-3): Մեսիան հաստատեց ապաշխարությունը եւ պատվիրեց ի գործ դնել՝ ցանկանալով, որ այն դառնա մեղավոր հոգիներն Աստծո հետ հաշտեցնելու ուղի:

Հայրն է Նաեւ, որ առաքյալները ձեռնադրեցին եպիսկոպոսներ եւ քահանաներ, որոնք եւ նրանցից հետո դարձան «խորհրդակատարներ»: Եկեղեցագիտական ու պատմագիտական վավերագրերը վկայում են, որ Բ դարավերջին եւ Գ դարասկզբին Ապաշխարության խորհրդի ներքին կառուցվածքը, վարդապետական եւ աստվածաբանական բովանդակությունը հատկապէս լավ էին, սակայն խորհրդի կատարման ծիսական կողմն ու առանձնահատկությունները հազիվ էին նշանակում:

Բրիստոսի խաչելությամբ իրագործված փրկագործությունը շարունակվում է առաքյալների, ապա՝ Եկեղեցու միջոցով: Պետք է ասել, որ առաքյալի խոսքերով՝ Եկեղեցու փրկագործական նկարագիրը «սուրբ քահանայությունն է», որի հիմնական նպատակը մարդու փրկությունն է: Իր փրկագործական առաքելությունը Եկեղեցին իրագործում է խորհուրդների եւ աստվածապաշտական արարողությունների միջոցով, որոնցով մարդ-անհատը դառնում է Եկեղեցու անդամ ու հաղորդակցվում աստվածային փրկագործությանը: Բրիստոսի մարմինը՝ Եկեղեցին, գորացնում է հավատքը եւ փրկության շնորհ է տալիս իր անդամներին. այն Հիսուսի ներկայությունն է այս աշխարհի վրա, եւ այդ ներկայությունը կենդանի, վավերական ու ամրոցական է խորհուրդներով («Գանձաար», Ա, 1992, էջ 62):

Արիստե ԶԱՆԹԻՅԱՆ



Սեպտեմբերի 6-ին «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի տաղանդավոր եւ շնորհաշատ երիտասարդներն ակումբի նախագահ Երիկ Սահակյանի գլխավորությամբ այցելեցին Տավուշի մարզի Սեւար գյուղի մոտակայ-

քում գտնվող դիրքեր, հանդիպեցին մեր հերոս սպաներին եւ զինվորներին, ոգեւորությամբ անցկացրին հայրենասիրական միեռցառում, որը նպատակ ուներ բարձրացնել զինծառայողների տրամադրությունը, ոգեւորել եւ

ԾԱՌԱՅՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

գոտեպնդել նրանց: Միջոցառումը հազեցած էր հայրենասիրական երգերով, ժողովրդական պարերով, պատմության հերոսական դրվագների, գորավարների փառաբանումներով, հոգեւոր առաջնորդների հայրենակներ գործերի լուսաբանումներով: Հարկ է նշել, որ միջոցառումը տեղի ունեցավ հենց այն վայրում, որտեղ պայթել էր թշնամու կողմից արձակված հրետանին: Չինվորները մեծ ուրախությամբ դիմավորեցին երիտասարդ հայրենասերներին, իսկ այն կարգին, թե ինչպիսին է մեր զինվորների տրամադրությունը, բոլորի շուրթերից լսվեց միայն «ՄԱՐՏԱԿԱՆ» պատմասիւնը: Մենք հպարտ ենք, որ ունենք այսպիսի հերոսներ, որոնք ամուր կանգնած են մեր սահմանին:

Նշենք, որ «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբն իր

գործունեությունն սկսել է 2014 թվականի փետրվար ամսից, սակայն, չնայած այս կարճ ժամանակահատվածին, ակումբն իր ակտիվության շնորհիվ հասցրել է բավականին լուրջ աշխատանքներ կատարել: Մասնավորապէս՝ երիտասարդ հայրենասերներն իրենց առջեւ խնդիր են դրել հնարավորության սահմաններում օգտակար լինել գործառնությունը զինծառայողների մարտական ոգու բարձրացմանը, հայրենասիրության զարգացման ու ամրապնդմանը, հայրենիքի պաշտպանության հարցում իրենց լուրման ներդրելու գործում շարունակական եւ թիմային աշխատանքներ կատարելուն: Ի դեպ՝ նշված աշխատանքների կարիքն իրող զգացվում է հատկապէս սահմանամերձ Տավուշի մարզում, իսկ թե որքանով, կար-

ծում եմ, կհասկանա յուրաքանչյուրը, ով գեթ մեկ անգամ եղել է սահմանին մոտ կամ գոնե ծանոթ է հայրց պատմությանը: Ինչեւէ...

Անդրադառնալով ակումբի գործունեությանը՝ ուրախությամբ նշենք, որ ակումբի անդամների թիվը գնալով ավելանում է: Միջոցառումների կազմակերպման հարցում իրենց պատրաստակամությունն են ցուցաբերում նաեւ գործառնության հրամանատարական կազմերը, ռազմական ուսուցիչները, պետական այլ կառույցներ, Եկեղեցին: Միջոցառման ավարտին ակումբի մասնակիցներն ավելացրին, որ իրենք միշտ պատրաստ են զինվորի կողքին լինելու, նույնիսկ, եթե մեկ զինվոր կանգնած լինի սահմանին:

Անուշ ԱՐԱՍԿՅԱՆ

Երեւանում աղետի մեջ առանձնապես տուժած է ձգված եւ որբացած երեխաների վիճակը... Ընտանիքի անբաժանելի շնորհը բռնել է որբանոցը, ընդունվածների թիվը անցել է երեք հազարից, եւ նոր որբանոց է բացվում բաց օդում... Թիֆլիսից եւ Լեւոնտապոլից եկած խմբերը լրացրին աշխատավորների կազմը բազմաթիվ չափով... Անհրաժեշտ է, որ քաղաքները պատրաստվեն ընդունելու երեխաներին մոտիկ օրերս»...

Հովհաննես Թումանյանի 1915 թ. օգոստոսի 14-ին Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտե ուղղած այս գրությունը Մայր Աթոռում

Հայոց ցեղասպանությունն «Արարատի» էջերում

Մայր Աթոռի որբանոցը

բացված որբանոցի մասին է: Այդ օրերին մեծ բանաստեղծն իր դատեր՝ Նվարդի հետ Էջմիածնում հոգ էր տանում գաղթական ու որբ երեխաների մասին:

Հետագայում իր հուշերում նա գրել է. «Էջմիածնի որբանոցը որբանոց չէր իսկապես, այլ մանուկների ապաստարան, որովհետեւ ծնող ունեցող երեխաներն էլ էին ընդունվում... Դա մի պատասպարան էր, ուր հավաքվում, լցվում էին տվածմահի ծանկերից խլված երեխաները ժամանակավոր, մինչեւ որ մեր քաղաքներից կհասնեին ու կտանեին նրանց: Որբանոց չէր, ինչպես որբանոց չեն այժմյան մեր շատ որբանոցները, բայց անունը կապով ու մնաց որբանոց:

Զեմ սխալվիլ, եթե ասեմ՝ հուլիսի վերջերից սկսած, ամիս ու կիսկա ընթացքում, մինչեւ տասը հազար երեխա մտավ Էջմիածնի որբանոցն ու դուրս եկավ Էնտեղից, իսկ մեքը մնացողների թիվը եղավ 3500»...

Թումանյանի կենսագիրները գրում են, թե բանաստեղծը դժգոհ էր հոգեւորականների ու զանազան կոմիտեների դանդաղությունից: Գաղթականների ծով ալիքի, տառապանքի ու թշվառության մեջ Թումանյանի դժգոհությունը, թերեւս, զուտ զգացական հոգի վրա էր:

Մեծ եղեռնի տարիներին Մայր Աթոռ սբ Էջմիածինն իր ուսերին ահռելի պատասխանատվություն էր կրում: 1915 թվականի սկզբից Մայր Աթոռի առջեւ ծառացել էր ոչ միայն իր պատերի տակ ապաստան փնտրող տասնյակ հազարավոր գաղթականների, այլեւ հազարավոր որբացած ու չքավոր մանուկների խնամատարության, նրանց պատասպարելու եւ կերակրելու հարցը:

Գեորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի կոնդակով 1914 թ.

ստեղծված սբ Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովը 1915 թ. հունվարի 24-ի իր անդրանիկ նիստում այս խնդրի առնչությամբ արդեն իսկ որոշում էր կայացրել: «Արարատի» 1915 թ.

դեկտոյս ծնողները հեշտությամբ կարողանան գտնել իրենց զաւակներին: Իրաւունք տալ որբանոցի վարչութեանը փոքրահասակ որբերին յանձնել ի պահպանութիւն վստահելի ընտանիքներին այն պայմանով, որ երբ վարչութիւնը պահանջէ նրանցից անմիջապէս վերադարձնեն:

Ժողովը ցանկալի համարեց, որ Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովները տեղական ուսուցիչների յատուկ մարմին



ապրիլ-մայիս համարում այս մասին կարդում ենք. «Ժողովն ի նկատի առնելով, որ երեւանում բացուած է որբանոց, որ Նախիջեւանում եղած որբերն էլ պատասպարուած են այնտեղ, ցանկալի համարուեց, որ նման որբանոց եւս բացուի Ա. Էջմիածնում եւ այլ կենդրոնական տեղերում, եւ բոլոր որբանոցները կապ պահպանեն, որպէսզի որ-

կազմեն, որոնց վրայ պարտականութիւն դնեն հոգալու որբերի կրթութեան եւ դաստիարակութեան մասին»:

«Արարատը» հետագա համարներում պարբերաբար անդրադառնում է որբերի խնդրին՝ իր ընթերցողին եւս կոչ անելով անտարբեր չմնալ նրանց ճակատագրի հանդէպ:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 5

Մյուս խմբերում անպակաս էին կատակները, ծիծաղը, հյուրասիրությունը, միմյանց ուղարկվող մթերքները, եւ, իհարկե, ինչպես բոլոր մյուս տոներին, փեսացուի ընտանիքի կողմից հարսնացուին ուղարկվող տոնական «սեղանը» (մատուցարան)՝ ուլի լավագույն կտորներով:

Մուսա լեռում եւս ընդունված էր մատաղը: Հասարակ մատաղի համար անհրաժեշտ գումարը ձեռք էր բերում թաղական խորհրդի երկու-երեք հոգուց կազմված հանձնախումբը: Վերջինս Ս. Խաչից երկու-երեք շաբաթ առաջ շրջում էր տնետուն եւ հավաքում էր փող, ցորեն եւ այլ, ինչ ուներ գյուղացին: Փողը մնում էր փող, իսկ մնացածը փողի էր վերածվում, դրանով գնում էին մսացու եւ հարիսայի համար հարմար ցորեն:

Խաչվերացի տոնը նաեւ կոչվում էր Խեյրը Չաղազ (Քարիքի տոն): Սա համընկնում էր բերքահավաքի համարյա ավարտին: Եղանակը ցրտում էր, եւ ժողովրդի մեջ տարածված էր «Խաչ՝ ա բլ յորդակըն իջերի քաջ» (Խաչի տոն՝ վերցրու անկողինը ու ներս փախիր) ասույթը: Մուշում այդ խոսքի գուգահեռն էր՝ «Աստվածածնա՝ բակը մտիր, Սըր Խաչին՝ ծակը մտիր»:

Տնետուն մտնելու եւ խեյր հավաքելու իմաստը նաեւ այն էր, որ ամեն մարդ հնարավորություն ունենար մասնակցելու այս հանրային մատաղին, որն Աստծու եւ բնության հանդեպ երախտագիտական զգացումների արտահայտության ձեւերից մեկն էր, եւ, հավանաբար, հեթանոսական կյանքի մի մասն էր (Գրգայան Գրիգոր, Տոներ. Մուսա լեռան ազգագրությունը, 33 ԳԱՄ Գիտություն հրատարակչություն, Եր. 2001):

Մուսա լեռում Ս. Խաչը կոչվում էր նաեւ Խիչեյն Չաղազ: Այս տոնն առանձնահատուկ տեղ ու նշանակություն ուներ մուսալեռցու համար: Տոնի Նախօրյակին ժողովուրդը տոնական տրամադրության եւ եռուզեռի մեջ էր լինում: Շաբաթ երեկոյան արթնոթիւն կից պարտեզում վառում էին օջախները, մորթում մսացուն, լվանում ձավարը: Սկսվում էր հսկումը՝ պղինձները կրակին դնելը, միսն ու ձավարը լցնելը, կրակը վառելն ու իսկելը: Ընդունված կարգի համաձայն՝ անասունի ոտը-գլուխ-փորոտիքը տրվում էր աղքատներին, իսկ թոք-փորոտիքը մնում էր ակ-

րատի՝ թեթեւ ընթրիքի համար: Դա երիտասարդների բաժինն էր: Նրանք խմբվում էին մի մեծ ծառի տակ, խորոված անում, օդու շշերը փոխանցում մեկը մյուսին:

Երբեմն մի ջուլթակ կամ այլ գործիքներով ձայնակցում էին բացօթյա սեղանին՝ ստեղծելով բարձր տրամադրություն ու հաճելի ոգեւորություն: Հարիսայի մասնագետները մերթնդմերթ մոտենում էին ջահելներին, մի երկու քաղցր խոսք ասում, մեկ-մեկ բաժակ խմում, մի պատահաբար ուտում ու գործի անցնում՝ կես ժամից կրկին վերադառնալու համար:

Հարիսան դանդաղ եփվում էր մինչեւ հաջորդ օրը՝ կիրակի ցերեկվա ժամը 1-2: Բա-հանսն գալիս, օրհնում էր, ապա սկսվում էր բաշխումը: Այդ օրը ոչ ոք տանը ճաշ չէր պատրաստում. հարիսայի օր էր:

Տարածված էին Մուրթ Խաչի տոնին հանգուցյալներին նվիրված արարողությունները, որոնց նկատելի մասը կապվում էր տոնի պահից՝ ուրբաթ օրը: Տարոնում եւ Մուշում կանայք, առավոտյան ժամերգությունից հետո խաղող, ձմերուկ եւ հաց վերցրած, գնում էին գերեզմանատուն, օրհնել էին տալիս մերձավորների գերեզմանները եւ ուղեւիղներից բաժին հանում քահանային ու հաղթատներին: Մնացածը տանում էին տուն եւ բաժանում ընտանիքի անդամներին (Լալայան Երվանդ, Մուշ-Տարոն, ԱՅ, Գիրք 26, Թիֆլիս, 1916):

Միսիանում Նույն տարում նշեցյալ ունեցողները Ս. Խաչի ուրբաթ օրը ոսպով շորվա եւ տանում եւ իրեն հոգեբաժին բաժանում եւ գերեզմանները օրհնել տալիս: Նույն օրը ուխտի եւ գնում զանազան ուխտատեղիներ, մանավանդ՝ Լոր գյուղի մոտ գտնվող Ծառու Ս. Հովհաննես (Լիսիցյան Ստեփան, Չանգեզուրի հայերը, Եր., 1969):

Վասպուրականում տարածված էր այդ օրվա կապակցությամբ փայնաթեօջ (փամեմով հաց) թխելու եւ այն աղքատներին բաժանելու սովորույթը:

Պարտադրում, ինչպես գրում է Հովհաննես Հովսեփյանը, այդ օրն ամեն մի խաչապաշտ հայ պարտավոր էր գնալ գերեզմանոց, հարգել իր անցյալ բոլոր հանգուցյալների հիշատակը:

Խաչվերացի տոնից հետո՝ մինչեւ հաջորդ տարվա տոնը, տարվա ընթացքում, հանգու-

ցյալների հարազատները կրակ գերեզմաններին տապանաբար էին դնում: Խաչվերացի օրն ամեն ընտանիք իր ունեցվածքի չափով անհղամթերք ու մրգեր էր տանում, հատկապես՝ խաղող: Դրանք ժողովում էին գերեզմանոցին մոտ գտնվող մի կալում:

Վաղ առավոտից քահանան՝ գյուղացիների ուղեկցությամբ, հին ու նոր բոլոր հանգուցյալների գերեզմաններն օրհնում էր: Մարդիկ համբուրում էին քահանայի ձեռքի խաչը եւ Ավետարանի վրա, որպես խաչհամբույր, դրամ դնում:

Գերեզմանօրհնեքն ավարտելուց հետո հանգուցյալների հիշատակին համայնական հանգերույթ էր կազմակերպվում: Ժողովուրդը հավաքվում էր մի ընդարձակ կալում եւ ծալապատիկ նստում սփռոցների շուրջը: Առանձին սփռոցներ էին բացում տղամարդկանց, կանանց եւ պատանիների համար (Հովսեփյան Հովհաննես, Պարտադիր հայերը, Ազգագրություն, հ. 1, Եր., 2009):

Բացի այդ, այստեղ ընդունված էր նաեւ հանգուցյալի մահվան տարեկից կապակցությամբ տապանաբարերի տեղադրումը: Իսկ տարվա հաշվարկը կատարվում էր Խաչվերացից Խաչվերաց ժամկետով:

Տոնին առնչվող ժողովրդական ավանդույթներից էր նոր հանգուցյալներ ունեցող ընտանիքներին հարազատների կողմից ուլ կամ գառ նվիրելու սովորույթը: Դրանք, թոնի մեջ խորովելով, բլրուր ձավարով ու փլավի վրա դրած, բաժանում էին սգավոր ընտանիքներին:

Հին երեւանում այդ տոնը կշում էին սեպտեմբերի 15-ին կամ սեպտեմբերի կեսի կիրակիի հաշվարկով: Աստեղ եւս տարածված էր ուլեր խորովելու եւ նվիրաբերելու ավանդույթը: Կանայք խմորեղեն էին թխում, տղամարդիկ՝ ուլ մորթում: Ուլի միսն այդ օրվա առանձնահատուկ, անցյալում անհրաժեշտ ուտելիքն էր, առանց որի տոնը լիարժեք չէր կարող լինել: Կիրակի օրը յուրաքանչյուր ընտանիք ջանում էր ուլ խորովել: Ուշագրավ է, որ երկու-երեք օր առաջ գնած ուլը պահում էին առանց կերի ու ջրի: Պատճառն այն էր, որ ուլից տիկ էին հանելու, իսկ որբան այդ մատաղացուի որովայնը դատարի լինելը,



այնքան մաշկը դուրսն դուրս կգար: Ուլը մաշկում էին ու այն ամբողջապես շամփուրի վրա հազցնելով՝ կախում թոնրի մեջ:

Դնում էին այնպես, որ մեջտեղը մի փոքր կախ ընկնի, եւ ճարպը հալվելիս հոսի տակը դրված կնունով ձավարի փլավի վրա: Թոնրի բերանը ծածկում էին կապե կափարիչով եւ շուրջը ցեխով այնպես էին պատում, որ ամբողջ տաքությունը մնար թոնրի մեջ: Կապե այդ կափարիչի կենտրոնում լցնում էին բոռնցքի մեծությամբ ցեխագունդ, որի միջոցով որոշում էին խորովի վերջնական պատրաստ լինելը:

Տոնի հաջորդ՝ երկուշաբթի օրը, մեծ մեռելոց է. այդ օրը գրեթե բոլորն այցելում են իրենց հարազատների շիրիմներին:

Այսպիսով՝ հայոց ավանդական կենցաղում Խաչվերաց տոնն առավելապես ընկալվում էր որպես տնտեսական տարվա պարբերաշրջանի սահման, որը, հավանաբար, կապված է եղել աշխատանքի օրահավասարի հետ: Պատահական չէ, որ շատ բնակավայրերում կլոր տարվա շրջափուլը հաշվարկվում էր Խաչվերացից Խաչվերաց:

Պատրաստեց Մարիամ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Սկզբը՝ էջ 7

«Մայր Հայաստանի որբացած զաւակները մեզ են ապաւինել, սիրելի՛ ընթերցող, մեր խնամքն ու մեր օգնութիւնն են հայցում: Չուրկ իրենց խողխողուած ծնողների փաղաքշանքից, զուրկ իրենց հարազատների ջերմագին զգուանքից՝ սպասում են միայն մեր գոյութեանը, մեր կաթոգին սիրտիանքը տեսնել ու մսխաբուել: Նորա մեր ապագայ վառ յոյսերն են, նորա մեր սիրտսուն բողբոջներն են, որոնք մեծանալով պետք է կրկին վառեն իրենց ծնողների՝ թշնամուց հանգրցած ճրագները, պետք է տաքացնեն իրենց ծնողների օջախները, պետք է կրկին իրենց Մայր երկրում տիրանան իրենց դարերով ունեցած սեպիական հողին ու ջրին: ...Պետք է յարմարաւոր վայրերում կազմակերպենք կանոնաւոր որբանոցներ: Ժողովներ այդ դժբախտներին, մեծացներն ու դաստիարակներն նրանց եւ մեծ խնամքով իւր ժամանակին ուղարկենք երկիրը շարունակելու իրենց ծնողների ու պապերի կեանքը, տիրանալու իրենց քաղցր հողին ու ջրին: ...Պետք է անշուշտ թեմերում սրբազան առաջնորդները եւ արժանապատիւ քահանայները արհաշան կերպով աջակցեն ու ժողովրդի ուշադրութիւնը ամեն տեղ հրաւիրելով՝ օրինակելի կերպով կազմակերպեն մեր որբերին խնամելու ու դաստիարակելու գործը, լաւ խմանալով, որ նրանք են մեր ապագայ յոյսը, մեր ապագայ վառ օջախների հայրերն ու մայրերը»,- կարդում ենք «Արարատի» 1915 թ. հուլիս-օգոստոս համարում:

Որբերի խնամքը կազմակերպելու համար շուտով Մայր Աթոռում ստեղծվում է առանձին «Որբախնամ մարմին»՝ եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի անդամ Բաբկեն վարդապետի ղեկավարությամբ, կառավարչուհու եւ խնամող քույրերի հսկողությամբ: «Որբերը զետեղուած են թէ՛ ճեմարանի բակում եղած նախկին վարժոցի ընդարձակ շինութեան մէջ եւ թէ՛ գիւղում, առանձին վարժու բնակարանի մէջ: Առ այժմ խնամուող որբերի թիւը հասնում է մոտ 300-ի,

Հայոց ցեղասպանությունն «Արարատի» էջերում Մայր Աթոռի որբանոցը

որոնք ստանում են ամեն խնամք եւ հոգածութիւն»,- հայտնում է «Արարատը»:

Այսուհանդերձ՝ «Որբախնամ մարմինը» բախվում էր բազմաթիւ դժվարությունների: 1915 թ. դեկտեմբերին որբանոցում երեսուն են բժավոր տիֆի դեպքեր: Անհրաժեշտ էր հատուկ միջոցներ ձեռնարկել, որի մասին Մայր Աթոռի պաշտօնական ամսագրից տեղեկանում ենք. «Հին որբանոցը, ինչպէս գիւղում եղածը, փոխադրուեցան ճեմարանի ննջարանները, փոքրերին բաժանելով ըստ սեռերի եւ իւրաքանչիւրին յատկացնելով մի-մի մեծ ընդարձակ, լոյս եւ օդառատ ննջարան. կազմուեցաւ առանձին սեղանատուն Նոր-Մանկավարժական թանգարանում: Ի նկատի ունենալով սնունդի խնդիրը՝ կազմուեցաւ առանձին խոհանոց իւր բոլոր պարագաներով:

...Որբանոցի Վարչութիւնը չափազանց կարեւորութիւն տուեց բժշկական-առողջապահիկ վիճակին եւ մաքրութեան խիստ հսկողութեան, որով եւ իսպառ վերացան բժավոր տիֆի դեպքերը Որբանոցից»:

Ու թէեւ հաջողվում է երեխաներին փրկել համաճարակից, սակայն մահացու հիվանդության զոհ է դառնում որբանոցի տեսուչը՝ Բաբկեն վարդապետը:

Ստեղծվում է նոր վարչություն, որն իր առջեւ դնում է նաեւ նոր խնդիրներ: Մասնավորապես՝ «Նոր Վարչութիւնը յուսուարից սկսած հոգաց եւ որբերի մտաւորի մասին՝ բանալով ճեմարանի վարժոցը նոցա համար, ուր դասախօսում են ճեմարանի ուսուցիչները: Որբանոցի կառավարչուհին, օրն երկու անգամ՝ փոխ ընդ փոխ դասաւանդութեամբ, առաւօտները մի մասին եւ ճաշից յետոյ միւս մասին համարը»:

Միաժամանակ գնալով աճում էր որբերի թիւը: «Դեկտեմբերի սկզբից Որբանոցում

ցում պատասպարուած որբերի թիւն այնքան շատացաւ, որ հարկ եղաւ նոցա առանձին վայրեր տեղափոխելու մասին մտածել»,- հայտնում է «Արարատը»:

Որոշվում է որբանոցում ապաստան գտածներին տեղափոխել այլ վայրեր՝ որբերի նոր խմբերի ընդունելու համար: Մասնավորապես 200 որբերի ապաստան տալու խնդրանքով Մայր Աթոռը դիմում է ուղարկում Թիֆլիսի որբախնամ հայկական կազմակերպություններին: Շատերն էլ ուղարկվում են Ալեքսանդրապոլի որբանոց: 30 որբի խնամակալությունն էլ իր վրա է վերցնում Նյու Ջերսիի սփյուռքահայությունը:

Գետոգ Ե Կաթողիկոսի օրհնությանն է արժանացել նաեւ ժամանակի հայտնի մտավորական Տիգրան Նազարյանի նախաձեռնությունը: 1916 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր համարից, «Պ. Նազարեան առաքելութիւն ունէր Աղեքսանդրապոլի, Երեւանի եւ Էջմիածնի շրջաններից մեծաքանակ որբեր ժողովել եւ տեղափոխել Ղարաբաղ՝ այնտեղ նոցա համար կարելի ապաստարաններ հիմնելով, ինչպէս Շուշի քաղաքում, Նոյնպէս եւ Ղարաբաղի թեմերի վանքերում»:

Ղարաբաղ պետք է տեղափոխվեր 2000 երեխա: «Որբերն արդեն փոխադրուած են երկաթուղով մինչեւ Ելախ կայարան, իսկ այդ տեղից պ. Նազարեանի օգնական Մովսէս-բէկ Իզաբեանի խնամքով՝ կառքերով մինչեւ Շուշի եւ կամ իրենց ապաստարանների վայրերը»,- հայտնում է «Արարատը»:

Ղարաբաղում եւ հատկապէս Շուշիում հետագա տարիներին սանձազերծված հայկական կոտորածներից հետո ինչպիսի եղավ այս որբերի ճակատագիրը, դժվար է գուշակել:

Իսկ Մայր Աթոռում ապաստան գտած հազարավոր որբերից «Արարատն» արձանագրել է 297-ի անունը, որոնք շարունակել են բնակվել Սբ Էջմիածնի եղբայրական օգնության որբանոցում: 1916 թվականի օգոստոսին կազմված այդ ցուցակում երեսունը մեծանալու 2 տարեկան էր: Նրանք բոլորը կորսված հայրենիքի ամենատարբեր բնակավայրերից էին:

ԻԲՐԵՎ ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր օրերում Ճաղկազարդի տոնին, երեխաների առատությունը հայկական եկեղեցիներում բարի ավանդույթ է դարձել: Այս օրը Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը հռչակել է նաեւ իբրեւ Մանուկների օրհնության օր:

1917 թվականի մարտի 26-ին՝ Ճաղկազարդի օրը, Մայր Աթոռ Սբ Էջմիածինը կրկին լի էր մանուկներով: Նրանք բոլորը՝ շուրջ 600 երեխա, ցեղասպանությունը վերապրած որբեր էին, որոնք ապաստան էին գտել Մայր Աթոռի հովանու ներքո գործող որբանոցներում: Այս մասին 1917 թ. «Արարատը» գրում է. «Մ. Աթոռի խնամքի տակ ապաստարան գտած բոլոր տասը որբանոցների 600-ից անելի որբերը մաքուր հագնուած, պատշաճ հանդիսաւորութեամբ, իրենց կառավարչուհիների, դաստիարակչուհիների եւ քույրերի առաջնորդութեամբ արժանացան Ս. Հաղորդութեան:

Պատարագից յետոյ բոլոր որբերը զոյգ-զոյգ, տղաներն ու աղջկաներն առանձին խմբակներով երկշար կանգնած սպասում էին Ն. Սրբութեան Տաճարից ելնելուն: Վեհ. Հայրապետը, անցնելով իրեն առաջնորդող եպիսկոպոսական դասի հետ, հայրութեան նահատակութեան այդ կենդանի վկաների շարքերով, ի սրտէ օրհնում էր այդ փոքրիկներին, նոցա ուշիմութիւն ու շնորհ մաղթելով, որպէսզի ապագայի յոյսերի կենդանի սերմնարաններ լինեն կենդանութիւն ստանալիք հայրենիքի մէջ»:

Հեղինէ ՄԿՐՏՉԱԿԱՆ

Բանաստեղծն ու իր ընթերցողը

Սկզբը՝ էջ 5

Ժխտում է մարքսիզմ-լենինիզմի դրույթն առ այն, թե իբր «բանվորը հայրենիք չունի»: Չի՞ հնացել արդյոք այս դրույթը, - հռետորաբանում է նա եւ ավելացնում. առանց հայրենիքի ոչ մի մշակութային արժեք չի ստեղծվի, որովհետեւ դրանք «ազգային են ամենից առաջ»: Ուրեմն էլ ինչո՞ւ գանգրահեր տղան տրորի քո սիրտը՝ «Երգող սիրտը Նաիրի»:

Ըստ նրա՝ ցավալի է, որ Չարենցը «չի տվել ոչ մի տող տեսական»: Չառարկենք Չարենցի այս նվիրյալին եւ չվկայակոչենք բանաստեղծի տեսական բազմաթիւ մտքերը, այլ միայն հետեւենք նրա դատողություններին:

Կոչ է անում հավաքել մտքերը ցիրուցան եւ իր հերթին կասկածի ելքարկում ժամանակին ամենաառաջնային համարվող «կոլեկտիվի», «մենքի» գաղափարն ընդդէմ անհատի, եսի, բանի որ կոլեկտիվի «...ցանկության ամեն մի պոզին // Անհատին խեղդում են, դարձնում անկամ»:

Փշրում է, դարձնում մաս չնչին Ղարձնում սրտաթափ, անուղեղ, Ու քշում է նրան կոլեկտիվ Նաիրիին Անորոշ հեռուն կաժաններով Նեղ:

Չե՞նք ապրում արդյոք միջնադարը. Միջնադարն այն խավար ու խեղդիչ, Երբ մի ու միակ սուրբ հայրը Գիտություն էր, օրենք եւ դաիժ:

Երբ ամեն ինչ մի գույն ուներ, Կար մի ճշմարտություն միայն, Նրանից դուրս ամեն ինչ սուտ էր, Խաբեություն ու ունայն:

Այստեղից հետեւություն. «Կոլեկտիվն ու անհատը կյանքում // Չպետք է խեղդեն իրար», «Ո՞ր՞ ասաց, թե գալիքը մեծ //

Կոլեկտիվն է շինում, կոլեկտիվին է...»: Սո՛ւտ է,- շարունակում է նա եւ այդ սուտը տրորող համարում Չարենցին, Նյուտոնին եւ Լենինին (որպես հեղափոխության առաջնորդ, անհատ): Ահա այդ պատճառով էլ կյանքը տխուր է, որովհետեւ «չկանք ես, դու, նա, կան «մենք», դրա համար էլ «կյանքը մնացել է աներգ»: Անհատն ստեղծում է, տալիս կոլեկտիվին, ինչն էլ սերնդեսերունդ ժառանգաբար փոխանցվում է: Իսկ անհատի ու կոլեկտիվի միջեւ միշտ կա «մի վիճ, մի խորթություն»:

Ընթերցող բանաստեղծն անցնում է հաջորդ հարցին.

Ո՞ր է կարդում քեզ, քո լավերը, Շա՞տ են արդյոք հասկացողները քեզ, Ո՞ր է ըմբռնում հոգուդ թռիչքները Երգդ հասել է ձորագետ:

Կոմունիստը ժամանակ չունի կարդա քեզ, Եվ ինչո՞ւ կարդա, ինչի՞ն ես պետք, Նրան հարկավոր են բանաձեւեր ու թեզ, Լրագիր, պոլիտիկա, սենսացիոն դեպք:

Գյուղացի՞ն... Նա, որ երագում Տեսնում է հավ, կով, ձի ու հաց, Օ՛ր, ռամիկն այդ ասուն, Որ մի գունդ խեղճություն է ու հարց:

...Ինչո՞ւ կարդա քեզ նա՝ բանվորը, Ի՞նչ անհրաժեշտ ես նրան դու, Նրան պետք չէ քո ոտանավորը, Նա երագում է փլավ ու գաթա:

Պարզ ասում է, որ ինքը թերահավատ է եւ չի տեսնում «...կուլտ արշավն ահարկու // Գրագետ միջինները զարթոնող»: Նա վերստին կոլեկտիվից առանձնացնում է եզակիներին, ովքեր «պետք է լինեն վերելում լուսաշող»:

Եվ նորից հիմնահարցը, որ ազգի ճա-

կատագիրն է.

Դժվար եմ հասկանում, Չարենց, Թե վաղն ո՞վ կլինի Նաիրիիդում, Ո՞ր է գնում արեւին հասակակից Այդ երկիրն ու ժողովուրդը անկոտորում:

«Դեպի սոցիալիզմ» հիմար, - այսի՞նքն, «Դեպի կոմունիզմ տխմար», - այսի՞նքն, «Դեպի մեծ ինտերնացիոնալը» - Իսկ այնտեղ մեր Մկոյի հայը:

Այնտեղ Մկոն կլինի Իվան, Իվանը կլինի Ժան կամ Հասան, Հասանը կլինի Չի-պի-ու - Հոտ մի անորոշ, անլեզու:

Կլինի մի ջրի շիլա, Կլինի զանգված մի անորոշ - Հայկանուշը կդառնա Իզաբելա... - Օ՛ր, որոճողներ աներագ ու գորշ...

Այստեղ նա ընդհատում է իր «անպետք-անկեղծ» չափածո նամակը եւ կրկին իր սերն ու ակնածանքը հայտնում Չարենցի հանդեպ. «Միտոս ուզեց խոսել քեզ հետ, // Եեզ հետ, պոետ մեծ»: Հեղվից հայրենիքի՝ Մասիսի, Նաիրիի կարոտն է տանջում, եւ այդ ամենի խորհրդանիշը Չարենցն է:

Ահա բանաստեղծ-ընթերցող, ընթերցող-բանաստեղծ մի փոխհարաբերություն, որ օրինակելի է ամեն ինչով: Այնպես որ ամենեւին բացառված չէ, որ Չարենցի «Ընթերցող պոետին» բանաստեղծության



անվանական հասցեատերը լինի հենց այս արգո Նաիրին՝ Գառնիկ Շահինյանը:

Դավիթ ԳԱՄԴԻՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտուրյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ gh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 17.9.2015 թ.

Տպագրանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ